

ՅՈՎՅ. ԶԱԳՈՐՅՈՒՆԻ

Յ. Յ. ԳԱՅՆԱԿ ՅՈՒԺԻԿ
Անգլիա ՀԱՅՈՒՆ ԵՅԼ ԵՅԼ



ԳԻԵՆԻ
ՄԻԼԻԹՐԻ ԲԻ ԱԿ ՏԱՐԱԾՈՒՅՈՒՆ
1925

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Մի ղեկուցագիր է սա, որ ներկայացրել եմ Հ. Յ. Դաշնակցութեան արտասահմանեան մարմինների Խորհրդաժողովին, սոյն 1923 թ. Ապրիլ ամսին:

Խորապէս համոզած լինելով, որ այստեղ արծարծւած ինդիբները ամենալուրջ մտածումների առարկայ պիտի լինեն ոչ միայն կուսակցականների, այլ եւ ամեն մի հայ մարդու համար, պարտք համարեցի տպագրութեան տալ ու հանդային սեփականութիւն դարձնել զեկուցագիրս:

Տպագրում եմ ամենուին ու ամենզդովին, բաց ի վերջին երեք-չորս էջերից, որ պարունակում են կօնկրետ առաջարկներ ու վերապահելու են միայն կուսակցական շրջանների համար:

Բուքրեշտ, Յուլիս 1923 թ.

Յ. Յ.

ԸՆԿԵՐՆԵՐ

Ինձ համար շատ երկար ու շատ ծանր մտածումների առարկայ են եղել այս խնդիրները։ Տարակոյս չունեմ, որ նոյնը եւ ձեզ համար ՇՀ գիտեմ միայն, թէ արդեօք դօք էլ յանգել էք նցն եղբակացութիւններին։ Վախենում եմ թէ՝ «Հւելին ասեմ. վախենում եմ թէ իմ վերջի եղբակացութիւնը» — այն շատ դժար արտասանելի խօսքը, որ ես խղճի մոտք պիտի ասեմ այստեղ — վախենում եմ թէ այդ խօսքը ընդհանուր վրդովմունք, դուցէ եւ զայրոյթ առաջ բերէ խորհրդաժողվի մէջ։

Դրան պատրաստ եմ ես։

Խնդրում եմ միայն հաւատաք՝ Ա) որ ինձ համար աւելի ծանր էր գրել ու ստորագրել այդ խօսքը, քան ձեզ համար՝ լսել այն իմ բերանից. Ա) որ թեմեւամտութեան կամ փոքրիոդութեան, անցողակի տրամադրութիւնների կամ հասրժեակ եղբակացութիւնների արդիւնք չէ այդ խօսքը, այլ խոր համոզմունքի ու խոր գիտակցութեան, — այնչափ, ի հարկե, որչափ ընդունակ եմ ես դիտակցելու ու ըմբռնելու դրութիւնը, դատելու, զնահատելու և ընտրութիւն անելու։

Ապա շատ ինդրում եմ՝ մի քիչ համիերատար լինէք ու աշխատէք մօտենալ հարցերին անկաշկանդ մորով — մի բան, որ՝ այնքան էլ հեշտ չէ կուսակցական կեանքով ապրող ու կուսակցօրէն մոտածող մարդկանց համար:

Ներեցէք խնդիրին անվայելը ութիւնը: Ուրիշ պարագաների մէջ այս կարգի խօսքերը կը լինէին ասելորդ ու անտեղի. բայց զեկուցման բացառիկ բոլվանդակութիւնը հարկադրում է ինձ ու իրաւունք տալիս՝ կոչ անելու ձեր կատարեալ լայնամութեան ու պարտաճանաչութեան գերագոյն գիտակցութեան:

—

Անցնում եմ նիւթիս:

Նղրակացութիւններս լայնօրեն հիմնաւորելու համար մեծ կարիք եմ զգում թարմացնելու. ձեր յիշողութեան մէջ՝ մի քիչ հանգամանքօրէն հայ քաղաքական դատի ապրած փուլերը — Մեծ պատերազմից սկսած մինչեւ Լողանի Խնֆերանսը — ու Հ. Յ. Դաշնակցութեան կատարած դերը այդ շրջանում: Բայց վախինում եմ, թէ ի շարը դորժագրած լինեմ ձեր ուշադրութիւնը: Ուստի կրծատում եմ խօսքս ու ներկայացնում եմ ձեզ մի շատ սեղմ, ամիովի ու չոր տեսութիւն միայն թերեւս սա էլ ծանրաբեռնի ժողովը, բայց այլ կերպ չեմ կարող մօտենալ ասելիքիս:

Ուրեմն՝ ինչ աստիճաններ է անցել հայ քաղաքական դատը 1914 թւականից սկսած, ինչպէս են զարգացել, դասաւորել ու միմնանց յաջորդել գեպքերը եւ ուր են բերել. մասնաւորապէս՝ ինչ է արել մեր կուսակցութիւնը եւ ինչ ունի անելու սրանից յետոյ:

Երբ կենտրօնանում եմ այս հարցերի վրայ, վերյիշում եմ մօտաւոր անցեալը, զտում եմ եականը ոչ-էականից, անջատում եմ հիմնական դժերը երկրորդական կամ սպատահական մանրամասնութիւններից ու դասաւորում եմ անցքերը ժամանակագրական կարդով՝ մորին մէջ պատկերանում է հետեւեալը:

—

1. 1914 թւականի աշնան սկիզբներին, երբ Թիւրքիան դեռ չէր մտել պատերազմի մէջ, բայց արդէն պատրաստութիւններ էր անուն մտնելու, Անդրկովկասում սկսեցին կազմակերպւել՝ մեծ եռանդով ու մանաւանդ մեծ աղմուկով՝ հայ կամաւորական խմբեր:

2. Յ. Դաշնակցութիւնը, հակառակ իր ընդհանուր ժողովին, որ հաղիս մի քանի շաբաթ առաջ՝ կրղըումում՝ բացասական որոշում էր տւել, — գործօն մասնակցութիւն ունեցաւ թէ խմբերի կազմակերպման եւ թէ նրանց ետակայ ուղամական գործողութիւնների մէջ, թիւրքիայի դեմ:

Այսպիսի մի ծանրակշիռ ու ամենալուրջ հետեւակներով յզի ձեռնարկութեան մէջ, Հ. Յ. Դաշնակցութեան Անդրկովկասի մարմններն ու անհատ գործիչները հակառակ գնացին կուսակցութեան գերադոյն մարմնի՝ ընդհանուր ժողովի՝ կամքին:

Ինչու:

Ի միջի այլոց (ու մասնաւորապէս) այն սպատճառով, որ վարակւել էին զանգւածային տրամադրութիւններից, տարւել էին տարերային հոսանքով:

Այս օրինակը պարտադրում է յիշելու եւ յիշեցնելու, որ Դաշնակցութիւնը՝ Անդրկովկասի մէջ՝ անցեալներում էլ եղել է ոչ այնքան հեղինակ ու նախաձեռնող, որքան հետեւող այն շարժումների, որոնք առաջ են եկել իրանից անկախ: Այսպէս էր 1903 թւականին (ըմբոստացում ու ցոյցեր եկեղեցական կալւածքների դրաւման առմիւ), այսպէս էր 1905—1906 թւականներին (հայ-թաթարական արիւնահեղ ընդհարումների), այսպէս էր նաև բանւորական առաջի մեծ շարժումների ժամանակ (1903—1906 թւականներին), երբ Դաշնակցութիւնը զեկավարում էր՝ Բագւում, Թիվլիսում ու Բաթումում:

օտար սօցիալիստական կուսակցութիւնների քաղաքականութիւնով ու գործելու եղանակներով:

Նոյն բնորոշ գիծը արտայսյուել է՝ ինչպէս կը տեսնենք մի քիչ յետոյ նաև մեր ետագայ գործունելում մէջ:

Պարագ բան կը լինէր հարց գնել այսօր, թէ պէտք էր արդեօք ասպարեղ դային մեր կամաւորները, Պատմական երեւցիթները ունեն իրանց սեփական ու անխորտակելի տրամաբանութիւնը: 1914 թւականի աշնան հայ կամաւորական խմբերը կաղմնեցին ու կուեցին թուրքերի դէմ, որովհետեւ չէին կարող չը կազմիել ու չը կրւիլ. սա բնական ու անխորտակելի հետեւանք էր մի հոգեբանութեան, որով մնել էր հայ ժողովուրդը առ նւազը մի քառորդ դար, մի ամրող սերունդ, այդ հոգեբանութիւնը պէտք էր դժոնել իր արտայսյութիւնը ու գտաւ:

Նւ դաշնակցութիւնը չէր, որ պիտի կասեցնէր շարժումը, եթէ նոյն իսկ ցանկանար: Կա կարող էր օգտագործել եղած տրամադրութիւնը, ընթացք ու ելք տալ կուտակած ցանկութիւններին, յօյսերին ու յոյզերին, կաղմակերպել պատրաստի օյժը — այդքան կարողութիւն ու հեղինակութիւն ուներ: Բայց հակառակել հոսանքին ու իր սեփական գիծը տանել — անընդունակ էր, անընդունակ էր թեկուղ սյն միակ պատճառով, որ դաշնակցութիւնը ինքը՝ մասսա է, բնադրներով ուժեղ, բայց գիտակցութիւնով թոյլ:

Ե՞լ աւելի պարագ բան կը լինէր հարց գնել այսօր, թէ ո՞վ անհատապէս պատասխանառու է եղածին (եթէ առհասարակ գրւելու լինի պատասխանառութեան ինդիր): Եթէ չը լինէին Մեսրովը եպիսկոպոսը, Ալ. Խատիսիսեանը, զգոտօր Զաւրեանը ու Ս. Յարութիւննեանը, Դրօն ու Անդրանիկը — նրանց փոխարէն հանդէս կը գային ուրիշ մարդիկ ու կ'անեին նոյն բանը:

Եթէ կամաւորական խմբեր կաղմնը սխալ քոյլ էր, — այդ սխալի անխորտակելի հետեւանք էր ու բնական շարունակութիւնը քաղաքական ուղղութեան, որի արմատները պէտք է որոնել շատ աւելի հեռու ու շատ աւելի խորը: Առ այժմն կարեւոր է արձանագրիել այն սոսկ փաստը միայն, որ մենք ամենամեծ չափերով մասնակից ենք եղել կամաւորական շարժման եւ որ այդ արել ենք հակառակ կուսակցական կամքը արտայսյուղ ընդհանուր ժողովի որոշման:

2. 1914 թւականի ձմեռը ու 15ի գարնան առաջի ամիսները ողեւրութիւնն ու յօյսերի շրջուն էր ամրող ռուսահայութիւնն համար, մէջն առնելով ի հարկէ եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Չենք կասկածում, որ պատերազմը պիտի վերջանայ դաշնակիցների կատարեալ յաղթութիւնով, թիւ բրիան պիտի պարտւի, անդամանատ լինի եւ որ այնտեղի հայութիւնը պիտի աղատադրւի վերջապէս Փարել ենք Ռուսաստանին անվերապահօրեն:

Առանց որ եւ է զրական հիմք ունենալու, տարւած էինք այն հաւատով, որ Ցարական կառավարութիւնը՝ ի վարձատրութիւն մեր հաւատարմութիւն, մեր ջանքերի ու օգտութեան՝ պիտի շնորհէ աւելի կամ պակաս լոյն ինքնավարութիւն թէ թիւ բրիայից աղատադրւած հայկական վիլայիթներին եւ թէ Անդրկովկասեան Հայաստանին:

Իլլիւզիային մի անմետափանցիկ միմնուրութ էինք ստեղծել մեր մորի շուրջը Մեր սեփական ցոնկութիւնները զրել ենք ուրիշների մէջ, մեզ հաճելի իմաստ էինք տալիս անպատասխանառու մարդկանց անբովանդակ խօսքերին, ինքնաներշնչման հիպնոզի տակ կը ըրցը էլ ենք իրականութիւն պիտակցութիւնը ու տարւել երազակներով:

Թերանից յերան, ականջից սկանջ անցնում էին ինչ որ խորհրդաւոր խօսքեր, որ իրր թէ ասւել են փոխարքայի պալատում. շարունակ մատնանիշ էր արւում ինչ որ կրտութիւն (Վօրօնցօվ-Դաշկովի նամակը կամողիկոսին), որ իրր թէ զօրեղ փաստաթուղթ էր մեր ձեռքում՝ աղագայում մեր պահանջները ներկայացնելու և իրաւունքները պաշտպանելու համար, — վարակութիւն կաղմած մի չնչին նամակ, որ ոչինչ չէր պարունակում, բայց ի ընդհանուր ու շատ անորոշ նախադասութիւններից, որոնց մէջ կարելի էր գնել՝ ըստ ցանկութեան՝ ամէն տեսակ բովանդակութիւն:

Գերագնահատում էինք հայ ժողովուրդի կարողութեան շափը, քաղաքական ու ռազմական ալիժերը, ուսւներին մատուցած մեր օժանդակութեան կարեւորութիւնը: Աւ գերագնահատելով մեր շատ համեստ արժանիքները՝ բնականօրէն շափաղանցնում էինք նաև մեր յօյսերն ու սպասելիքները:

3. 1915 թւականի ամիսնն ու աշնանը տեղի ունեցան թիւրքահայերի բռնի տեղահանութիւնը, մասսայական աքսորներն ու ջարդերը — մահացու, հարւած հայ քաղաքական դատի համար:

Պատմական Հայաստանի մի կեսը — այն իսկ կեսը,ուր՝ 80 ական թւականներից ժառանգած աւանդութիւններով ու նւրոպական դիւանագիտութեան որդեգրած ընթացքով՝ մեր անկախութեան հիմքը պիտի դրւեր, — այդ կեսը դատարկւել էր Հայ ազգաբնակութիւնից, Հայկան վկայեթները մնացել եին առանց հայութեան:

Թուրքերը գիտեին թէ ինչ են անում ու զղջալու պատճառ չունեն այսօր, Թիւրքիայում Հայկական ինդիրը արմատապէս լուծելու համար՝ սա ամենից կտրուկ եւ — ինչպէս ցոյց տւեց ապագան — ամենից նպատակայարմար միջոցն էր եղել:

Եւ դարձեալ՝ պարապ բան կը լինէր Հարց դնել այսօր, թէ ո՞ր չափով անդրադարձել է մեր կամաւորների մասնակցութիւնը պատերազմի մէջ՝ թիւրքահայերի աղետական վիճակի վրայ, Ոչ ոք չի կարող ասել, թէ վայրադ հալածանքները տեղի չեին ունենայ, եթէ սահմանի այս կողմը մենք ուրիշ ընթացք բռնած լինենք. ինչպէս՝ դրան հակառակ՝ ոչ ոք չի կարող ասել, թէ հալածանքները կ'ունենային ոյոյն բնոյթն ու ոյոյն ծաւալը, եթէ ոյոյն իսկ ցուցադրած չը լինէինք մեր թշնամութիւնը թուրքերի հանդեպ:

Սա մի ինդիր է, որի մասին կարելի է ունենալ շատ տարբեր կարծիքներ:

Փաստը այն է սակայն — ու սա է եականը — որ թթրական տիրապետութեան դէմ տասնեակ տարիներ առաջ սկսւած պայքարը յանդեց թուրքահայ ժողովուրդի տարագրութեան կամ բնաջնջման եւ թիւրքահայաստանի ամայացման:

Այս էր ահանելի իրականութիւնը:

Թռ՛ այնուհետև ամբողը քալազքակիրմ մարդկութիւնը ցնցւէր զայրութից անորակելի ոմիքի առաջ: Թռ՛ պարզամենտների մէջ ու Հրապարակային ժողովներում պետական մարդկի սպառնական խօսքեր արտասանելին մարդասպան թուրքերի դէմ: Թռ՛ “կապոյտու” գեղինու և ամէն ուրիշ գոյնի գրքեր ամեաստանով թղթեր հրատարակեին: Թռ՛ եկեղեցիներում ամէն գտանանքի քահանաներ երկնային լարկութիւն ու աստուածային պատիք կանչին շարադրների գլխին: Թռ՛ Համաշխարհային մամուլը լրնէր իր եշերը սարսափեցոցի և կարագրութիւններով ու ականատեսների վկայութիւններով...

Թռ՛... գործը կատարւած էր արդէն եւ խօսքերը չեին, որ կեն-

դանութիւն պիտի տային արարական անապատներում ընկած դիակներին, վերաշխներն աւերւած օջախները ու շենացնէին ամայացած երկիրը, թուրքերը գիտցան իրանց անելիքն ու արին:

4. 1915 թւականի երկրորդ կեսը ու ամիսով 1916 թւականը ընդհանուր սուդի ու յուսահատութեան շրջան էր մեզ համար:

Փախտականները լանից, Ալաշկերտից, Բասենից — բոլոր նրանք, որոնց յաջողել էր աղատւել ջարդերից — տասնեակ ու հարիւր հազարներով լեցւել եին ոռւսահայ գաւառները: Սնօթի, մերկ, հիւանդ, սարսափահար ու բարոյալքւած մարդկանց հեղեղներ էին, որ գալիս էին մեկը մրւսի ետևելց ու հեղեղում մեր գիւղերն ու քաղաքները: Ըստ սովահար զանդւածները եկել էին մի երկիր, որ ինքն էլ քայլայած էր արդէն ու հացազուրկի: Ուժասպառ, հիւանդ, արիւնաքամ կուտակւել էին փախտականները իրար վրայ: Ծիրակն ու Արարատեան դաշտը վերածւել էրն մի ահանելի հիւանդանոց-անկելանոցի, ուր հայ մարդիկ — մեր աշքի առջեւ, մեր գռների շեմքին — մեռնում էին հաղարներով սովոր ու հիւանդութիւններից...

Ու մենք անդօր էինք փրկելու այդ թանկագին կեանքերը:

Զայրացած ու սարսափած, որոնցինք յանցաւորներին ու գտանք իսկոյն: ոռւս կառավարութեան նենք քաղաքականութիւնը:

Քաղաքականապէս տհաս ու մորով անհաւասարակշուած մարդկանց յատուկ անհետեւականութիւնով, մի ծայրայեղութիւնից ընկանք անմիջապէս հակառակ ծայրայեղութեան մէջ ուրբան կոյր ու անհիմն էր մեր երեկւայ հաւատը ոռւս կառավարութեան հանդեպ, նոյնքան կոյր ու անհիմն էր այսօրւայ մեղադրանքը:

Ասում էինք. ոռւսները իստրեցին ու գաւաճանեցին մեզ: Դիտու մուտք գանգաղ շարժւեցին, անվճռովական եղան, ետ ու առաջ գնացին, գրաւեցին ու նահանջիցին, որպէս զի թուրքերին առիթ, ժամանակ ու հնարաւորութիւն տան տեղացի հայերին կոտորելու Ռուսները այդպէս արին որպէս զի ամայացնեն Հայաստանն ու կոլակներ նստեցնեն այն տեղ: իշխան Լօրանով-Ռօստովսկու ծանօթ ծրագիրն է, որ իրականացւում է այսօր...

Այսպէս մոտածում ու արտայայտում էր ոչ միայն ժողովուրդը, այլ ևս մեր կուսակցութիւնը — մեր գիտակից ընկերներից շատ շատերը:

Հենք ուղում հասկանալ, որ ոռուների լնթացքը բացատրելու համար բնուածեցտ չեր ենթազրել, թէ նրանք ծրագիր ու դիտաւորութիւն են ունեցել մեզ կոտորել տալու, այլ բաւական էր միայն ենթազրել, թէ նրանք չեն ունեցել նպատակ՝ վրկել թուրքահայութիւնը ինչ զնով էլ լինի: Խոկ այդպիսի նպատակ նրանք ի հարկէ չեն ունեցել. մենք ենք եղել, որ վերապրել ենք նրանց մեր սեփական ցանկութիւնները եւ երբ իրականացած չենք տեսնել այն՝ դաւագրութիւն ենք որոնել:

Բնական էր, որ մեր կամաւորները շուապում էին որ առաջ մտնել վան ու լուս. նրանք զնում էին վրկելու այնտեղի հայութիւնը, դա էր իրանց նպատակն ու կոչումը — միակ նպատակն ու կոչումը: Բայց չե՞ որ Ռուսաստանի դօքքերը հայ կամաւորներ չեն ու տարբեր ինդիւններ ունեն լուծելու նրանց դանդաղիութեանն ու անվճռականութիւնը, որ մենք դաւազրութեան էինք վերապրում, կարող էր հեշտութեամբ բացատրել հրամանատարութեան սովորական տպիկարութիւնով (ապիկարութիւն, որի օրինակները այնքան բազմաթիւ էին նաև ուրիշ ձականների վրայ, ուր ոչ մի պատճառ չկար որ եւ է յետին միտք ենթազրելու) կամ՝ թերեւս ռազմական լնդհանուր պահանջներով, որ մենք չե գիտենք, չենք ուղում դիտենալ:

Չատ հետաքրքիր ու բնորոշ երեւոյթ էր սա, արժանի առանձին ուշադրութեան:

Մարի մի տարօրինակ արերրացիայի շնորհիւ, մենք — մի քաղաքական կուսակցութիւն — մոռանում էինք կարծես, թէ մեր դատը՝ մի միջանկեալ ու փոքրարժէք հանգամանք է ոռուների համար, այնքան փոքրարժէք, որ նրանք՝ հարկ եղած գեւպքում առանց մի բռպէ տատանւելու ու ամենայն հանգստութեամբ կ'անցնէին մեր դիակի վրայով:

Չեմ ասում: Իէ չե գիտենք, չենք հասկանում: Գիտենք, ի հարկէ, հասկանում էինք ու ասում: Երբ հարկ էր լինում բառերով բնորոշել դրութիւնը: Բայց սրտերիս խորիում չենք գիտակում սյդ բառային ֆորմուլի ամբողջ իմաստը, մոռանում էինք մեր գիտցածը ու եղբակացութիւններ անում այնպէս, որ կարծես մեր գատն էր մեծ պատերազմի ծանրութեան կենդրոնը, պատճառն ու նպատակը: Երբ ոռուները առաջ էին շարժում: Սրտերիս չը դիտակցած խորիում

ասում էինք. գնում են մեզ վրկելու. խոկ երբ ետ էին գալիս, ասում էինք. նահանջում են, որ մեզ կոտորել տան...

Երկու դեպքում էլ շիոթում էինք հետեւանքը նպատակի ու դիտաւորութեան հետ:

Որոնում էինք ապացոյցներ ոռուների գաւաճանութեան եւ ի հարկ է գտնում, — ճիշտ այնպէս, ինչպէս վեց ամիս առաջ որոնում էինք ու դտնում նոյն ոռուների բարեացակամութեան անհերքելի ապացոյցներ:

Դանդաւուել դառնօրէն չար բախտից ու մեղանից դուրս որոնել մեր դժբախտութիւնների պատճառը, — սա եւս մեր ազգային հոգերանութեան բնորոշ գծերից մէկն է, որից աղատ չէ ի հարկէ եւ դաշնակցութիւնը:

Կարծես հոգեկան մի առանձին միսիթարանք էինք գտնում այն համովների մէջ, թէ ոռուները սրիկայօրէն են վարւել մեր հանդեպ (ետագայում հերթմը պիտի գար վրանսիացիններին, ամերիկացիններին, անգլիացիններին, վրացիններին, ուղիւնիկներին — ամբողջ աշխարհին). Կարծես մի մեծ աւարինութիւն էր ու մի մեծ քաջագործութիւն, որ ինքներս այլպան միամիտ ու անհեռատես ենք եղել, զրել ենք մեզ (կամ թոյլ ենք տեսլ գնելու): Այնպիսի գրութեան մէջ, որ ամեն ցանկացող կարողանայ խորել, լքել, գաւաճանել, կոտորել կամ կոտորել տալ մեղ:

5. 1917 թւականի վետրւարին տեղի ունեցաւ ռուսական յեղափոխութիւնը: Անք առաջ բացւեցին անակնիալորէն նոր հեռամիկարներ:

Ռուսաստանում հաստատում էր զեմօկրատական իրաւակարգ, հերթի էին գրառում սօցիալական ծանրակշիռ ինդիւններ (օրինակ՝ հուղերի համայնացման խնդիրը): Երբեւ զեմօկրատներ ու սօցիալիստներ, մենք ցնծութեամբ ողջունեցինք նոր կարգերը. ապա՝ իրեւ ազգային-քաղաքական կուսակցութիւն՝ առանձնապէս ոգեւորւած էինք իշխանութեան ապակենդրոնացման, ծայրագաւառների ու աղքութիւնների ինքնավարութեան խոստումներով:

Սկսեց եռանդուն աշխատանք:

Պետական հին մեքանիզմը պետք էր փոխել պէտք էր նոր իշխանութիւններ հաստատել տեղերում: Յեղափոխութեան եռուղինի մէջ կենդրոնական կառավարութիւնը ի վիճակի չեր անելու այդ, ծանրութիւնը լնկնում էր տեղացինների վրայ: Կշանաբանները տրած էին

արդեն։ Գործի էին կանչած (կամ իրանք իրանց գործի էին կանչել) հասարակական հաստատութիւնները, քաղաքական կուսակցութիւնները, բանւորական ու արհեստակցական միութիւնները, ապա՝ ազգային ներկայացութիւնները։

Բազմազգեայ Անդրկովկասի համար մասնաւորապէս բնորոշ էր ու ծանրակշիռ՝ վերջինների մասնակցութիւնը իշխանութեան կաղմի մէջ։ Կազմւեցին կարեւոր կենդրոններում մի շաբթ ազգային խորհուրդներ, սրանց թւում նաեւ հայ ազգային խորհուրդներ։

Թիֆլիսում հաստատւեցին “Անդրկովկասեան Կօմիսարիատը” և “Բանւորական, զինւորական ու զիւղացիական խորհուրդների Անդրկովկասեան Աենդրոնը”, — միմանցից անկախ երկու իշխանութիւններ, որ պիտի վարեին երկու գործերը մինչեւ պետական մայուն օրդանների կաղմակերպումը։

“Խորհուրդների Աենդրոնը” տարւա վերջերին կուցրեց հմայքն ու չեղորացաւ. զրոգնժացաբար ամրապնդեց “Կօմիսարիատը”, որը դարձաւ մի տեսակ “մինիստրների զահլիմ ամրոշջ Անդրկովկասի համար։

6. “Կօմիսարիատը” — ինչպէս ետագայում նաեւ Այսին ու Անդրկովկասեան կառավարութիւնը — Կօպիսիսն կազմ ունեին

Կօպիսիսնը՝ ըստ ձեւի ու անունի միջնուսակցական, էր, ըստ եռութեան՝ միջազդայնական Պլիսաւոր կուսակցութիւններն էին. սօցիալ-դեմօկրատականի մենշերիկ հատածը, “Մուսաւաթը” եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը։ Փաստօրեն սրանք ներկայացնում էին երկրի երեք զվարութիւնները. վրացի, ազգրէշանական թաթար, հայ։

“Կօմիսարիատում” — ինչպէս ետագայում նաեւ Այսին ու կառավարութեան մէջ — գերիշող դիօք բանեցին ու զեկավարող դեր ունեցան վրացի մինչեւիկներ։

Ինչո՞ւ!

Ահա պատճառներից մի քանիսը

Առաջին Կօմիսարիատը ստացել էր իր լիազօրութիւնները դետրօն գրադի ժամանակաւոր կառավարութիւնից, այսինքն՝ պետական Դռ.մայի շըջաններից։ Դռ.մայի մէջ վրացի պատգաման որմերը՝ յենաած այնպիսի մի զօրել համառուսական կուսակցութեան վրաց. ինչպիսն էր սօցիալ-դեմօկրատականի վաղուց արդէն դրաւել էին կարեւոր դիրքեր, ապա հ

ցութիւն էին ձեռք բերել ու կապեր հաստատել։ Բնական էր, որ Անդրկովկասի համար “Կօմիսարիատ” կազմելիս՝ առաջի հերթին դրւեցին սրանք եւ ոչ հայերը կամ թաթարները, որոնց գոյութիւնը դումայի մէջ մնացել էր միանգամայն աննկատելի։

Նրկրորդ. Պետական գործեր վարելու համար վրացիներն ունեին քիւշատ պատրաստւած մարդիկ, որոնք՝ շնորհիւ գործոն մասնակցութեան քաղաքական մեծ կուսակցութեան ու ապա դումայի աշխատանքների մէջ՝ որոշ վարժութիւնն ու վիրածառութիւնն էին ձեռք բերած, մտենում էին մի քիչ պետական գործիք տիպին. Ոչ մենք, ոչ մուսաւաթականները այդպիսի դպրոց անցած չենք, այդ պատրաստութիւնը չունեինք։ “Մուսաւաթը” բոլորովին նոր կուսակցութիւն էր, իսկ Դաշնակցութիւնը աւելի վարժուած էր սուորերկրեայ աշխատանքի։ Անշուշտ, որոշ նշանակութիւն ունեմ նաեւ կուսակցական վիդերների ան հատական կարտղութեան շամբը. վրացիները հրապարակ էին հանել մի քանի տաղանդաւոր մարդիկ, մի քանի հանրածանօթ անուններ, որոնց կողքին նստեցնելու թէկնածուներ չունեինք մենք եւ հարկադրւած էինք տեղ բանել երկրորդ ու երրորդ շաբթերում։

Մի ուրիշ հանգամանքը՝ ջին թեժիմի ժամանակ պաշտօնեութիւնը Անդրկովկասում վրացիների ձեւին էր գլխաւորապէս Ա.յդ դրութիւնը մնաց նաեւ. թեժիմը փոխեւլուց յիտոյ, որովհետեւ տեկնիքական, աշխատանքներ կատարելու համար պատրաստւած մարդիկ ամենից աւելի վրացիներն ունեին. Պաշտօնեութիւնը ընականօրէն դառնում էր զորեղ նեցուկ՝ վրաց տարրի զիրքը ակրացնելու համար պետական Մեքսանիպը մէջ՝ Կօմիսարիատից սկսած մինչեւ երկամուղին ու լուսու-հեռացրածունը։

Իսկ ամենից կարեւորը հետեւեալն էր

Արաց ժողովուրդը քաղաքականապէս ամենից աւելի հասունացած ու ամենից լաւ կազմակերպւածն էր Անդրկովկասում. ապա՝ ամենից աւելի աղահովւածը (կամ ամենից քիչ վրանցւածը), ուստի եւ ամենից զօրեղը։

Շնորհիւ բարկացող աշխարհական զիրքի. Շնորհիւ. Համարկան անխուսուն միատարրութեան. Շնորհիւ նրան, որ պատերազմի լնմացքում ամենից քիչ էր տուժել. Շնորհիւ նրան, որ չուներ անլուծաններ, կեանդին սպառնացող վէճեր հարհանաների հետ, — շնորհիւ.

այս բարեխախտ հանդամանքների, վրացի ժողովուրդը շատ աւելի հնարաւորութիւն ունէր իր ձայնը լսելի անելու, քան հայերը կամ աղըրէյշանցիները:

Հարկ եղած դեպքում վրացիները հեշտութեամբ կարող եին մի ընդհանուր լեզու գտնել թէ՛ թիւրքիայի, թէ Աղըրէյշանի հետ, — յամենայն դեպս շատ աւելի հետ, քան հայերը։ Ապա՝ վրացիները ամս փոփուած եին ամրողովին Վրաստանի մէջ, չունէին զրառում վտանգւած հատւածներ, ինչպէս ունէին հայերը Աղըրէյշանում ու աղըրէյշանցիները։ Հայաստանում, Վրացիները ապահով նատած եին իրանց երկրում եւ թէ ունէին սահմանային վէճեր հարեւածների հետ, — սրանց աղըրքը պարզապէս տիրակալական հակումներ եին, որ կարող եին լսպահել, չափաւորւել, նոյն իսկ իսպառ վերացւել՝ առանց լրջորէն վտանգելու Վրաստանի ներկան կամ ապագան։

Այլ եին հայ-թուրքական ու հայ-թաթարական փոխարարերութիւնները, այստեղ կոյին ցաւու խոդիրներ, որ չեին կարող լուծւել առանց ամենածանր ընդհարութիւնների։

Թիւրքիան, անդառնալիորէն պարսուած արեւմուտքում ու հարաւում, ձգտում էր ապահովել ու ամրացնել իր ապագան հիւսիսարեւելքում։ Իսկ այստեղ հայերը, սեպի ուս իսրած իրացումի ու Բագրի միջև, կտրում եին թուրքերի որոնած ճամբան։

Հայերը սահմանային անդուծանելի վէճեր ունէին աղըրէյշանցիների հետ։ Ինդիրը այստեղ մի-երկու գաւառ աւելի կամ պակաս իրացնելու մէջ չեր, այլ այն աղդային անդամանատութիւնների, որ անխուսափելիքէն տեղի պիտի ունենային — ինչպէս էլ լուծւեր վէճը — մէկի կամ միւսի համար։ Հայաստան չեր կարող ապրել առանց թաթարական Շարուր-Նախիչևանի։ Աղըրէյշան չեր կարող ապրել (կամ շատ դժարութեամբ կ'ապրեր) առանց հայկական Ղարաբաղի։ Ղարաբաղը Աղըրէյշանի համար ու Նախիչևանը Հայաստանի համար նոյնը չեին, ինչ էր Վրաստանի համար Զաքաթալը։ Ախալքալաքը կամ Լոռին ու այս տեղ էր մեծ դժարութիւնը թէ՛ Հայաստանի եւ թէ Աղըրէյշանի համար։

Քաղաքականապէս աւելի հասունացած ժողովուրդները դուցե կարողանային դունել մի խաղալ ելք. բայց ոչ մենք, ոչ աղըրէյշանցիները չունէինք այդ հասունութիւնը եւ վէճը մնում էր վէճ, փոխադարձ անվտանգութեան ու փոխադարձ թշնամութեան աղըրիւր

Վրացիները շատ վարպետորէն (աւելացնեմ՝ նաև ցինիկաբար) օգտուում էին հայ-թուրքական ու հայ-թաթարական հակառակութիւններից՝ իրանց արտօնեալ գիրքը սմբացնելու համար թենւելով թուրքերի ու թաթարների վրայ կամ սպառնալով, թէ այն ուղղութեամբ կը շխտկեն իրանց ճակատը, անելանելի կացութեան մէջ եին դնում մել ու հարկադրում իրանց ցանկութիւններին յարմարելու։ Ապա՝ երեսները մեր կողմէ դարձնելով, մեղ մերձենալով (կամ մերձենալու մտադրութիւն ցուցադրելով), կոշկանգում էին ու որոշ շափով ահարեկում նաև աղըրէյշանցիներին։

Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առաւելութիւն էր տալիս վրացիներին ու ապահովեցնում՝ նրանց գերիշխանութիւնը։

Խըկարացրի մի քիչ, բայց Աղդրկովկասում կատարւածը հասկանալու համար չափաղանց կարեւոր է այս հանդամանքը։

Իսկ մեր կուսակցութիւննը յատկապէս պէտք է գիտենայ ու յիշի, որ ամենատագնասալի օրերին նա ապրել է ու գործել վրաց սոցիալ-գեմօկրատների հեգեմոնիայի տակ, քարշ է եկել նրանց փեշը բանած։

7. 1917 թւականի սեպտեմբերի վերջերին տեղի ունեցաւ թիֆլոսում՝ հայ Աղդային Համագումարը կազմեց Աղդային ժողովը ու իրրեւ դործագիր մարմն՝ Աղդային Անդրոնական խորհուրդ։

Այս Աղդային խորհուրդն էր, որ յետագայում խօսեց Աղդրկովկասի հայ ժողովուրդի անոնից ու ասպարէղ եկաւ իրրեւ համագային լիազօր ներկայացուցչութիւն։

Թէ Համագումարի, թէ ժողովի եւ թէ խորհուրդի մէջ գերիշխող տեղը պատկանում էր Հ. Յ. Դաշնակցութեան։

8. Նոյն տարւայ վերջերին տեղի ունեցան Աղդրկովկասում պատգամաւորական ընտրութիւնները Համառուսական Սահմանադիր ժողովի համար։

Պայքարող կուսակցութիւնների մէջ ամենից աւելի տեղ շահեց մենշևիկ սոցիալ-գեմօկրատականը (12 տեղ), ապա՝ Մըռսաւամը (10 տեղ) ու Հ. Յ. Դաշնակցութիւնը (9 տեղ)։ յետոյ դալիս էին — անշան թւերով ուրիշ կուսակցութիւններ։

Նրեք գլխաւոր կուսակցութիւնները ներկայացնում են Անդր-
կովկասի երեք գլխաւոր ազգութիւնները, որոնք՝ ըստ քաղաքական
կշռի՝ դասաւորւթեան այսպէս. Վրացի, Թաթար, Հայ,

Իսկ հայութեան ներում այս ընտրութիւնները եկան մէկ
անգամ եւս ապացուանելու, որ ամենից զօրեղ — աւելի ճիշջը՝
միակ զօրեղ, միակ կաղմակերպւած կուսակցութիւնը — Հ. Յ. Դաշ-
նակցութիւնն է:

9. Համառուսական Աահմանադիր ժողովը չգումարւեց. Հոկ-
տեմբերին բոնկեց բօշեւիկեան յեղափոխութիւնը, յաղթանակեց
Պետրօգրադում ու Մոսկվայում, յայտարարեց խորհրդային լրաւա-
կարգ եւ թոյլ շուեց որ հաւաքի գեմեկրատական սկզբունքներով
ընտրւած Աահմանադիր ժողովը, նկատելով այն բուրժուական հաս-
տատութիւնն:

Անդրկովկասը մնաց հաւատարիմ միեւուարեան յեղափոխու-
թեան եւ ըուղեց ճանաչել խորհրդային կարդերն ու իշխանութիւնը
ի՞նչու:

Որովհետեւ մեր ծայրագաւառում գերիշխող կուսակցութիւն-
ները կանգնած են լայն ռամկավարական տեսակետների վրայ, ուստի
եւ չեն կարող ընդունել դասակարգային ու մանուանդ կուսակցական
դիկուառուրաւ Ապա համաշած են, որ հօմնեիրտական կամ՝ նոյն
իսկ պարզ սօցիալիստական հասարակակարգի համար երկիրը չի հա-
սունացած տակաւին (Ել. չեմ ասում, որ "Մուսաւամելը ո բառ. շուներ
սօցիալիստական դաւանանք, Հ. Յ. Դաշնակցութեան սօցիալիստակա-
նութիւնը մակերեւոյն եր, ուղեղային, առանց խոր հիմքերի
կուսակցական զանգւածների մէջ, իսկ վրացի Անշեւիկների շարքում
շատ ուժեղ եր աղդայնական, հակառական հոսանքը):

Երկրորդ. բօշեւիկեան Մոսկվան անջառւած եր Անդրկովկասից
հակարօշեւիկեան դօնով. Կուրանով ու Հիւմիսային Կոմիտով։
Սկսել եր քաղաքացիական կորու Հեռաւոր Մոսկվան չեր կարող
թելադրել եր կամը Անդրկովկասին, ոչ ել օգնութեան զալ նրան.
Թինջեռ մեր անմիջական հարեւանները — Կուրանի կօպակները ու
Ակրսեւ-Դենիկինեան հակարօշեւիկեան բանակը — ամէն օր
կարող են դարձնել իրանց զէնքը մեր դէմ։

Երրորդ. Անդրկովկասի քաղաքականութեան ուղղութիւն տուող
վրացի մանշեւիկները՝ կուսակցութիւն՝ հատաշի հակառակորդ են
իրանցից անջառւած բօշեւիկներին։ Հաւատարիմ իրանց դաւանակո-
ւերին ու կուսակցական ընդհանուր քաղաքականութեան, մենշեւիկները
վարում են մեր երկրում նոյն պայքարը, ինչ իրանց ուստ ընկերները
դուսաստանում, "Մուսաւամելը, մոահոգւած բագւին տիրապետելու
խնդրով ու տարւած պանթեոպրական իդեալներով, հզուում եր օր առաջ
կտրել բոլոր կապերը Ռուսաստանի հետ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ
բազում՝ վախենալով Ռուրբական տիրապետութիւնից՝ բաւականին
սերտ կապակցութիւն ուներ տեղական բօշեւիկների հետ ու նոյնիսկ
գործակցում եր նրանց, Թիվիտում չեր կարող վարել — վրացի-
ներին ու թուրքերին հակառակ — բօշեւիկեան քաղաքականութիւն։
Չեր կարող, եթէ իսկ ցանկանարու բայց ցանկութիւն էլ չըւներ, որով-
հետեւ ոչ բօշեւիկեան իդեօլոցիան, ոչ ել գործելակերպը չեն հրա-
պուրում իրան։

Մեր կուսակցութիւնը հակարօշեւիկեան բանակում եր — մա-
սամի իր նկրքին համազումներով, մասսմի ել արտաքին պայմանների
ձնշման տակ։

10. Ի գեղ և յիշնցնել այստեղ այս միջն ու տատանող պիտի,
որ բանել են մեր ընկերները Բագրի մ. չ.։

Արդիւնտրելական Բագրուն իր բաղմահաղար բանորութիւնով ու
բանորական ուժեղ կաղմահակերպութիւններով, ամենից աւելի նպաս-
տաւոր պայմաններ եր ներկայացնում բօշեւիլմի ղարգացման համար.
Առ միակ վայրն եր ամբողջ Անդրկովկասում, ուր բօշեւիկները՝ յեղա-
փոխութիւնն առաջի իսկ օրերից՝ հաստատուն ապաստան ու յենակետ
են գտել։

Հեւականօրէն՝ Բագրուն չեր բացառում Անդրկովկասեան Աօմիսա-
րիատի իշխանութիւնը, նոյն իսկ հոկտեմբերեան յեղափոխութիւնից
յետոյ, բայց մասսորէն զորեկը վարում են երկու տեղական հաս-
տատութիւններ. "Հասարակական հիմնարկութիւնների խորհուրդը եւ
"բանուղական պատահրակների խորհուրդը"։

Ըստանի մէջ գերիշխում եր հակարօշեւիկեան հոսանքը, եր-
կրորդի մէջ՝ բօշեւիկեանը։

Մեր կուսակցութիւնը ուներ իր ներկայացուցիչները թէ առաջինի
և թէ երկրորդի մէջ։

Այս երկու միմանցից անկախ ու տարբեր բնոյթ ունեցող մոլո-
մինները բացայաց մրցման մէջ եին իշխանութեան տիրապետելու-
համար Առաջի շրջանում ոյժը՝ «Հասարակական հիմնարկութիւնների»
ձևին էր (այստեղ չափանիք աօցիալստերը լսելուոյն բջոկ եին կազմել,
լիբերալ բուրժուալիի հետ բօշեւթիւնների գեմ)։ բայց բանորական
«Խորհուրդը զօրեղանում էր օր օրի վրայ և 1918 թ. յունվարին
դրութեան տէրն էր արդեն։

«Խորհուրդին ուղղութիւն տւողը բօշեւթիւն հատւածն էր։

Մեծ ոյժ չեին ներկայացնում այն ժամանակ բօշեւթիւնները, նույն յաշողութիւնը հիմնած էր զլաւորապես այն փոխադարձ անվտաս-
հութեան վրայ, որ տիրում էր հակառակ բանակի ներառում։

Բօշեւթիւններին իրական ոյժ կարող էին հակադրել երկու կուսակ-
ցութիւնն միայն, թաճարական «Մուսաւաթին» ու հայիկան դաշնուի-
ցութիւնը։ բայց հակադրելու և յաշողութիւն ունենալու համար, պէտք
էր որ սրանք անվերապահօրէն միանային — մի բան, որ անկարելի էր։
որովհետեւ չկար փոխադարձ հաւատ ու վստահութիւն դաշնակցու-
թիւնը հասկանում էր, որ «Մուսաւաթին», հարկաւոր է իր բարեկա-
մութիւնը այնչափ միայն, որչափ գոյութիւն ունի բօշեւթիւնն սպառ-
նալիքն ու վտանդը։ բօշեւթիւններին չեղզացնելուց յետոյ «Մուսաւա-
թին» — երկրորդ հերթին — վերացնելու էր ասպարեզից նաեւ դաշ-
նակցութիւնը։ Կասկած չկար, որ նոյնը անելու են եւ բօշեւթիւնները,
երբ դաշնակցութեան զննած խորհրդի օգնութեամբ՝ խորտակեն «Մու-
սաւաթին»։ բայց Բագրայ հայ ազգարնակութեան ասպահովութեան
տեսակետից բօշեւթիւնն դիմուտուրան շատ աւելի ընդունելի էր (կամ
պակաս անընդունելի), քան «Մուսաւաթինը»։

Այս էր պատճառը, որ մերոնք Բագրում աւելի ու աւելի տարբում
էին բօշեւթիւնն հոսանքով ու մի տեսակ յենարան էին զառնում՝ բօշ-
եւթիւնների համար։

Ինչպէս թիֆլուում մենք ակամայից ընկել էրմք վրացի մնչեւթիւ-
ների հեգեմոնիայի տակ, միշտ այնպէս էլ բագրում ընկել էինք ուսու
բօշեւթիւնների հեգեմոնիայի տակ։ Երկու գեպրում էլ մեղ կաշկանդողը
թուլդ-թաթաթարական սպառնալիքն էր։

Մեղ վրայ յենած, բօշեւթիւնները խորտակեցին բագրում «Մու-
սաւաթին» ոյժը (1918 թւականի Մարտին)։ իսկ մենք՝ յենած բօշ-
եւթիւնների ու առհատարակ սուս տարրի վրայ եւ սրանց հետ միասին՝
կարողացանք պաշտպանել Բագրում թուլդ-թաթաթարական յարձակում-
ներից։

Վաս՝ մեր նախաձեռնութեամբ արդեն ու հակառակ բօշեւթիւնների։
Կամիմին՝ բերինք Պարսկաստանից անդիսկան զօլքեր (դա. վերջի ժամին
էր, երբ բօշեւթիւնները սպատաստուում էին փախչել Առևսաստան ու
արդեն նստել էին նաւերը)։

Եթէ անդիսացիք լրջորէն ամրանային բագրում, հաւանակուն է,
որ յետադոյ անցքերը մի քիչ տարրեր ընթացք տանեին Բայց անդիսա-
կան փոքրաթիւն զօլքերը շուտով լքեցին քաղաքը, նստեցին նաւերն ու
վերացարձան սուստաստան։

Իրենց մնացնիք մենսկ եւ ուրիշ բան չեթնիք կարող անել։ քան
հետեւել անդիսացների օրինակին — փախչել Պարսկաստան։

Աղրբեյշանի հառավարութիւնը, որ մինչ նստած էր գանձա-
կում, թուլքական բանակի ու զննած խուժանի հետ մրասին նուա-
բագու։ Տեղի ունեցաւ, հայ ազգարնակութեան անհնայ չարդը (ինչպէս
Մարտ ամին, բօշեւթիւնն ական կուի ժամանակի, տեղի էր ունե-
ցի). — պակաս շահիերով — թուլք աղդաբնակութեան չարդը)։

Այս գեպքերը կատարում էին Հայաստանից դուրս, թաթաթարա-
կան մի հեռաւոր վայրում։ բայց անմիջապէս անցրագառնում էին մեր
քաղաքական կացութեան վրայ, բարդացնում ու դժարացնում այն։

Թաթարները շարունակ զրդում էին մեր զեմ թուլքերին, շոա-
պեցնում էին նրանց առաջնազառում՝ բազուն որ առաջ աղատելու
համար եւ վարպետորէն շահագործում էին Մարտ ամին կոտորածները,
վերացրելով այն բացառապէս հայերին։ Արացները ընականորէն չեին
հաւանում մեր գործակցութեանը բօշեւթիւնների հետ, ծուռ աշքով էին
ույում մեղ, կասկածելով թէ յարմար առիթի ենք սպասում, որպէսզի
բաց անենք Անդրկովիկասի դռները ուսու բօշեւթիւնների առջեւ։ Ապա՝
բերել բազու անդիսական զօլքեր այն ժամանակի, երբ Թիֆլիսում
նստած էին գերմանացիները, որոնց հետ իրանք վրացները սիրային
թիրուի մէջ էին — սա նկատուում էր դաւաճանութիւն վրացի-գերման
թուլդ-թաթաթարական քաղաքականութեան։

Բագւում բռնած մեր դիրքը անվտահելի դաշնակից էր դարձրել մեզ մեր կասկածու հարեւանների աշքում եւ ենթակայ՝ սրանից բղխող բոլոր դժարութիւնների:

Խսկ Բագւայ մեր ընկերները շարունակում էին տանել իրանց սեփական քաղաքական դիճը նաև այն հաշուով թէ՝ ամրանալով Բագւում ու իրանց վրայ քաշելով թուրբ-թաթարական ոյժերը՝ ազատած կը լլնեն Հայաստանի մացորդը թուրբական արշաւանքից:

Բագւայ Էսիլջողական խնդիրը մէկ անդամից սպառելու համար, պատմութիւնը շատ առաջ տարայ — մինչեւ 1918 թ. աշունը. վերադառնում եմ ժամանակագրական կարգին:

11. 1917 թ. Կոյեմբերի վերջերին սկսւեց ոռոս բանակի կազմալուծում ու փախուստը կովկասեան ճակատից:

Ճակատը քանդուում էր ու դատարկում սարսափեցուցիչ արտգութեամբ:

Յունուարի վերջերին բանակ չկար այլեւս։ Հայկական փորբաժին զօրամնաներն էին, որ՝ միացած նախկին բանակի վերջի բնկորների հետ պիտի պահէին այսուհետեւ էրդրումի դիճը։

12. Անդրկովկասի գրութիւնը դառնում էր շատ վտանգաւոր։ Թօլջեւիկեան յեղափոխութիւնն ու օրի վրայ ծաւալըող քաղաքաշիական պատերազմը բոլորովին կտրել էին մեր ծայրադաւառը Ռուսաստանից։

“Պօմիսարիատը”, որ դեռ շարունակում էր կառավարել երկիրը կերենսկու “ժամանակաւոր կառավարութեան” անունից, այդ կառավարութեան տապալումից յետոյ կորցրել էր իր ոտի տակի հողը։ Պէտք էր կազմել մի նոր իշխանութիւն, աւելի հեղինակաւոր ազդարկութեան աչքում ու աւելի իրաւասու պետական դորժերը անկախորեն վարելու համար։

Այդ իշխանութիւնը հանդէս եկաւ յանձինս Անդրկովկասեան Սեյմի ու նրանից լիազօրւած կառավարութեան։

Սեյմը կազմեց Համառուսական Սահմանադիր ժողովի համոր ընտրւած անդրկովկասեան պատերազմներից, եռավատկւած թւով (ըստ կուսակցութիւնների ու սրանց ստացած քւէների): Այսպիսով՝ մէնչեւիկ-

ները (Արաստան) ունեցան Սեյմում 36 տեղ, “Մուսաւաթը” (Աղբեյշան) 30 տեղ, և Յ. Պաշնակցութիւնը (Հայաստան) 27 տեղ։

Սեյմը գումարւեց թիվլիսում, որ Անդրկովկասի բնական ու անհերելի մայրաքաղաքն էր։ Առաջի նիստը, որ տեղի ունեցաւ Փետրւարի 10ին (1918 թ.), ընդունեց “Պօմիսարիատի հաշետւութիւնն ու հրաժարականը” Ապա՞ նկատի առնելով, որ մեր ծայրագաւառը փաստորէն անջատւած է Ռուսաստանից ու յայտնի չէ, թէ երբ պիտի վերհաստատեն կարւած կապերը —

յայտարարեց Անդրկովկասը Ռամկավար Դաշնակցական Հանրապետութիւն, իրան ճանաչեց իրեւե երկիրի միակ օրենսդիր մարմին ու յանձնարարեց Ե. Գեղեցկովին (վրացի մէնչեւիկ) կաղմել ժամանակաւոր կառավարութիւն (մինհատրների դահլիճ), պատասխանատու Սեյմի առջեւ։

Իսա անջատում չէր Ռուսաստանից, այլ մի փաստային դրութիւն, որ ենթադրում էր՝ պիտի ունենար ժամանակաւոր բնոյը միայն Միջազգային տեսակետից, Անդրկովկասը շարունակում էր մնալ Ռուսաստանի անբաժան մաս։

13. Թուրքական զօրբերը, իրախուսւած ոռոս բանակի քայրայում, արագօրէն վերակալմէում էին, կարգի բերում ու աստիճանարար վերադրաւում կորցրած վայրերը։ Սիաֆամնակ թուրք հրամանատապութիւնը (Վեհիպ փաշան) նախաձեռնութիւն ունեցաւ վինադրագար ու խաղաղութեան բանակցութիւններ առաջարկելու։

Սեյմը որոշեց վերջ գնել պատերազմին ու խաղաղութեան դաշնակապել թուրքերի հետ։

Առաջին բանակցութիւնները տեղի ունեցան Տրապիզոնում, 1918 թ. Մարտ ամին։

Դաշնակցական ֆրակցիային յաջողեց մոցնել Սեյմի պահանջների մէջ մի առանձին կետ (մէկը շրջա հիմնական կէտերից)։ Ճանաչել տալ թուրքահայերի նկանորոշման իրաւունքը՝ Օսմանեան պետութեան շրջանակի մէջ։

Այս պահանջին (որ խմբագրւած էր շատ անորոշակի ու լայն ասպարեզ էր տալիս ամեն կարգի կօմպրօմիսների) թուրքերը անմիջապէս տէին մի շատ կարճ ու չոր պատասխան։ առ թիւրքիսյի ներքին խնդիր է, որի մէջ ոչ ոք իրաւունք չը պիտի ունենայ միջամտելու։

եթէ մէկ անգամ ել կրկնեփ, թուրքերը վերջ կը դնեն ամէն բանակցութեան:

Ու անդրկովկասցիք այլ եւս չը կրկնեցին:

Աը կրկնեցին շատ պարզ պատճառով. Այսիմ որոշումը ինքը արդէն մի ձեւական զիջում էր հայերի պահանջն, երեւոյթը փրկելու մի միջոց, առանց լրջօրեն հետափնդելու դիտաւորութեան: Վրացիները տրամադրութիւն չունեին (ու ել կարիք) թիւրքահայերի սիրոյն համար մի աւելրդ գլխացաւանք իրանց պատճառելու. իսկ աղօրէյլանցների սրտին շատ աւելի մօտ էին, ի հարկէ, թիւրքիայի պետական շահերը, քան հայերի վիճակը կամ նյոյնիսկ Անդրկովկասեան Հանրապետութեան ապագան: Եւ պատիրակութեան հայ անդամները չէին, որ պիտի կարողանային թելագրել իրանց կամքը թաթարներին ու վրացիներին:

Արդար լինելու համար պէտք է աւելացնել, որ իթէ այն օրւայ մեր դաշնակիցները (վրացիներն ու թաթարները) նոյն իսկ լրջօրեն, անկեղծօրեն ցանկանային պաշտպանել հայքական պահանջը — յաջղութիւն դարձեալ չը պիտի ունենային. ոյժերի իտիսարարերութիւնը արդէն այնպիսի էր, որ թուրքերը ոչ մի պատճառ չունեին վիճող լինելու. Այդ հասկանում էինք եւ մենք, հայ պատիրականերս:

Բանակցութիւնների ու երկարատեւ վիճարանութիւնների առարկան սահմանային ինուդիրն էր:

Թուրքերը կանգնած էին այն տեսակէտի վրայ, որ Անդրկովկասի ու թիւրքիայի միջեւ սահմանները դժւած են արդէն բրեստ-Լիտովսկում՝ ուսւ բօշեւիկների հետ կնքած դաշնուպրով. որ նրանք եկել են Տրապիդոն ոչ թէ մէկ անգամ լուծած ինդիրը նոր վերաբնութեան առնելու համար, այլ պարզապէս բարի-դրացիական կապեր հաստատելու համար իրանց նոր հարեւան՝ Անդրկովկասեան Հանրապետութեան հետ: Իսկ անդրկովկասցիք չէին ուղում ճանաչել Բրեստ-Լիտովսկան դաշնագրի օրինադրութիւնը և կանգնած էին այն տեսակէտի վրայ, որ թիւրքիային հողային վիճումներ անելու իրաւունքը պատկանում է մի մրայն տեղական (անդրկովկասեան) ժողովուրդներին, նրանց Սիյմին ու կառավարութեան: Ուրիշ խօսքով՝ անդրկովկասեան պատիրակութիւնը չէր ուղում ճանաչել Խօսքտական կառավարութեան իրաւութիւնը-նախ այն պատճառով, որ այդ կառավարութիւնը Ուուսաստանի համար էլ օրինական չէ, երկրորդ՝ համաձայն ժողովուրդների

թիւրուոշման սկզբունքի, որ հուշակւեց մէծ պատերազմի ընթացքում, Անդրկովկասի տէրը անդրկովկասեան ժողովուրդներն են եւ ոչ պատական կառավարութիւնը, իթէ նոյն իսկ օրինաւոր կառավարութիւն լիներ այն:

Այս տեսակէտը շատ գժար էր պաշտպանել ոչ միայն այն պատճառով, որ սա մի նոր ու վիճելի տեսակէտ էր միջադային իրաւունքի մէջ, ոյլ զիստուրապէս այն պատճառով, որ թուրքական բանակը վրեզադութիւն չէ էր օրի վրայ, իսկ անդրկովկասեանը՝ քայլքայում: Կորութիւնը չէ, միջադային վէճերի մէջ իրաւունքը պատկանում է նրան, որի բանակը աւելի զօրեղ է:

Շատ գժար էր նուև այն պատճառով, որ անդրկովկասեան պատիրակութիւն ներսումն էլ չկար համաձայնութիւն եւ ցանկութիւնների նյոյնութիւն:

Արացիները շահադրգուստ էին առանձնապէս բամբումի ու Աջարայի խնդրով եւ այս շրջանը (ամրողջովին կամ գէթ մասամբ) փրկելու համար պատրաստ էին զիջնելու թուրքերին Պարսկ ու Արդահանը: Իրան հակոռակ, հայերին պէտք էր Պարսկ եւ այստեղ մի բան շահելու: Համար մենք պատրաստ էինք շատ մէծ զիջնելու անելու Աջարիայում: Իսկ ազգրէջանցիների ցանկութիւնն էր, որ Աջարիան կազմի մի առանձին Հարաւ-Եւրեւմուեան մուսուլմանական հանրապետութիւն, իրրեւ. զորորդ (կամ հինգերորդ, եթէ հաշի առնենք նաև դաշտանը) անդամ Անդրկովկասեան դաշնակցութիւնն: Հակոռակ գէպքում կը գերազանեին, որ Աջարիան կցւի թիւրքիային ու յամենայն գէպս համաձայն չէին Արաստանին տալու: Ինչ վերաբերում է Պարսկին ու Արդահանին, ազգրէջանցիները կանդնած էին անվերապահօրեն թուրքական տեսակէտի վրայ. սրանք թուրքական հողեր են ու պէտք է յանձնւին թիւրքիային:

Թուրքերը շատ լաւ տեղեակ էին այս ներքին անհամաձայնութիւնների մասին ու պինդ կանդնած էին իրանց պահանջների վրայ:

Կար եւ մի ուրիշ պահանջ, որ երկար վիճաբանութիւնների առարկայ եղաւ. թուրքերը պնդում էին, որ Անդրկովկասը պիտի յայտարարի իր անջատումը Ուուսաստանից, որպէս զի կարելի լինի դաշն կնքել նրա հետ:

Անդրկովկասցիները առարկում էին, թէ Անդրկովկասը փատուօրէն անշատւած է արդէն ու ինստուօրէն անկախ է... բայց թուրքերը իրաւա-

ցիօրեն պատասխանում էին, թէ միշաղգային դաշնկը ստորագրելու համար բաւական չէ փաստային կացութիւնը, հարկաւոր է նաև իրաւական դրութիւն, որ ձեռք է բերում միայն որոշ ձեւականութիւններ կատարելոց յետոյ:

Անպոտով վիճաբանութիւնները շարունակւեցին մի ամիսող ամիս:

Թուրքերի համար անձեռնոր չեր այս ձգձգումը (հակառակ պարագային նրանք ամեն հնարաւորութիւն ունեին շատ կարծ կորելու). ժամանակն անցնում էր, մեր ուղղական ցյու ու դիմադրական կարողութիւնը շարունակ պակասում էր, թուրքերինը՝ աւելանում:

Դրույթիւնն այն էր, որ մինչդեռ Տրավիզոնում պատւիրակութիւնները նիստերի էին հաւաքւում ու անվերջ թղթեր գրում իրար. թուրքական բանակը անարգել շարունակում էր իր առաջնազգումը. Մարտի վերջերին գրաւած էր արդեն նրգումը, իսկ Ապրիլի առաջին օրիցին բաժնումը:

Բայց եւ այնպէս, Սկյուլ գեռ չեր ուղում ճանաչել իր պարտութիւնը, չեր վճռում անձնատուր լինել: Երբ պարզեց վերջնականապէս, որ թուրքերը մասդրութիւն չունեն ու մի զեղում անելու. Քրիստովիսկեան գաշնադրի պայմաններից, Սկյուլ ետ կանչեց իր պատւիրակութիւնը, Տրավիզոնի բանակցութիւնները խղեցին (երեւոյնները վրկելու համար, պատւիրակութիւնները ոյդ խղումը ժամանակաւոր ընդհատում անւանեցին):

14. Ներքին անհամաձայնութիւնները ու միմեաց բացասով հակումները, որ առաջի օրւանից արդեն գոյութիւն ունեին Սկյուլ ու Դաշնակցական կառավարութեան ներսում, այժմ Տրավարակ էին եկել շատ շեշտած կերպով:

Թուրքերի յաջողութիւններն ու աճող զօրութիւնը թեւ էին տւել ալլրէյշանցիներին. Արանց պատւիրակները Տրավիզոնում հնարաւորութիւն ունեին (եւ ինչ կասկած, որ օգտագործեցին այդ հնարաւորութիւնը) երկարուէն խորհրդացելու թուրքերի հետ եւ մի ընդհանուր գործելակերպ մշակելու. Սկյուլում աղբյուջանցիները այլ եւս չեին քաշւում ցուցադրելու, որ ամբողջովին թիւրքիայի կողմն են: Պաշտպաններով ու զարգացնելով թուրքերի տեսակետը, պահանջում էին, որ անմիջապէս յայտարարի Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից:

Ապա պահանջում էին զիջող լինել թուրքերի վերաբերմամբ, համաձայնութեան դալ նրանց հետ ու դադարեցնել պատերազմը, յայտարարելով, որ —

“մուսուլմանական գեմօկրատիայի կրօնական դգացումը թոյլ չի տալիս նրան դործոն մասնակցութիւն ունենալու թիւրքիայի դեմ մղող պատերազմի մէջ”.

Այս խօսքը, որ ասւել է Սկյուլում մուսաւաթական բանախոսի բերանով, պէտք էր թարգմանել պարզապէս այն իմաստով, որ պատերազմը շարունակելու գեպքում անդրկովկասեան թաթարները ոչ միայն չեն լինելու մեջ հետ (փաստօրէն նրանք երբեք էլ չեն եղել մեջ հետ, երբեք չեն կռւել թուրքական ճակատում), այլ կը լինեն մեր գեմա թիւրքի չեն կռւել կռւելու պահանջապէս Սկյուլի մեջեւիկեան հատւածը» տատանւում էին մի քիչ:

Երկու հոսանք կոր սրանց մէջ, երկու տարբեր սօրիանտացիան ռուսական ու գերմանօ-թուրքական հաւաքինները չեին ուղում կտրւել վերջնականապէս Ռուսաստանից եւ Քրիստովիսկու պայմանագիրը համարում էին միանդամայն անշնդունելի, կարծում էին որ պատւիրազմը պակաս չարիք է, քան այդպիսի պայմաններով կնքւած հաշտութիւնը: Երկրորդ հոսանքը հակառակ էր Ռուսաստանին, ռուսական վտանգը Արաստանի անկախութեան համար համարում էր աւելի մծ, քան թուրքականը եւ պատրաստ էր ամենամծ զիջումների թիւրքիայի հետ հասկացողութեան գալու համար (պարզ ասած, յոյս ուներ թէ Հայաստանի հաշեին կը յաջողի փրկել Արաստանի համար եթէ ոչ ամող Աշարիան, գեթ բաթում քաղաքն ու նաւահանգիստը):

Հայերը (Սկյուլում գաշնակցական ֆրակցիան) ու ուղում էին անջատւել Ռուսաստանից, ոչ ել որ եւ է բարի բան ունեին սպասելու թուրքերից: Հայերը ամենից աւելի շահագրգուած էին զէնքրով կանգնեցնելու. Թուրքերի արշաւանքը, որովհետեւ գիտէին, որ ամենից աւելի տուժողը (թերեւս միակ տուժողը) իրանք են լինելու եւ որովհետեւ գեռ յոյս ունեին ռաղմական յաջողութեան վրայ:

Ապրիլ ամսին, Ալեքսանդրօսոյի մէջ գումարեց՝ յատկապէս այս խնդրի համար՝ հայ Աղքային ժողովը, որը — հակառակ տողերս գրողի ղեկուցման մասնակ վճռեց մերժել Քրիստովիսկու պայմանագիրը ու շարունակել պատւիրազմը:

Բայց իրականացնել այդ որոշումը չէր տրւած մեզ, որովհետեւ մենք չէինք դրութեան տէրը, ոչ իսկ մեր սէփական բախտի տէրը զրացիների տառանումներս երկար չը տեսեցին, գերմանո-թուրքական թեւը յաղթանակեց ու այդ յաղթանակի առաջն արտայարտութիւնը եղաւ այն, որ Ապրիլի 22ին Սիյմը համիսաւորապէս յայտարարեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից:

Այս առմիւ վրացի ու թաթար լիդերները խանդավառ ճառեր արտասանեցին Սիյմում. դաշնակցական ֆրակցիան միացաւ անջատման առաջարկին առանց ճառի, մի հատիկ կարծ ու զուսպ նախադասութիւնով:

Հետ սրտով չէր, որ մենք արինք այդ. բայց չանել չէինք կարող: Խթէ հակառակ արտայայտւէինք, Անդրկովկասեան դաշնակցական Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդէր, վրացիներն ու աղօրէջանցիներն իսկոյն պիտի հաշուեին թուրքերի հետ ու թողնեին մեղ մենակ երես առ երես Աէհիսպ փաշարի բանակի դէմ՝ — մենակ, որովհետեւ Խուսաստանը (ոչ բօշիսիկեանը, ոչ հակարօշեւիկեանը) այն ժամկն չէր կարող հանել օգնութեան, եթէ նոյն իսկ կամենարու Ոչ միայն մենակ, այլ նաև թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միախն մեղ պիտի զարնեին նաև աղջրէջանցիները (ով դիտէ, գուցէ եւ վրացիները՝ Անալքալարը, Լորին ու Փամբակը ամերղողլին գրաւելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունեինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուղղում որ նա քանդէր, իսկ եթէ քանդւելու է՝ որքան կարելի է ուշ քանդէր: Ահա թէ ինչու հարկադրւած եինք հետեւելու մեր դաշնակից դրացիների քայլերին:

15. Ապրիլի 25ին ընկաւ Ղարսը Ընկաւ համարեա առանց կռւի, որովհետեւ թիֆլիսից ստացւել էր հրաման՝ յանձնել մերդը թուրքերին Այս դաւագրաման հրամանը տրւած էր առանց մեր պիտութեան ու առաջ բերեց այնպիսի վայրոյթ հեղինակների դէմ, որ դաշնակցական Հանրապետութեան քանդումը կարող էր տեղի ունենալ այդ օրն իւ եմ:

Բայց վաստը կատարւած էր արդէն. ռազմագիտական ամենակարեւոր կետը, մեր ճակատը պաշտպանելու միակ ամուր յինարանը — Դարսի բերդը — թուրքերի ձեռին էր: Տատանւելու ու դանդաղելու

տեղ չէր մնացել ոյլ եւս: Աերմը որոշեց անմիջապէս վերսկսել Տրապիզոնում լուդհատւած բանակցութիւնները, համաձայնելով ընդունել իրեւ ելակետ բրեստ-Վիտովսկու պայմանագիրը:

Բանակցութիւնները վերսկսւեցին Բաթումում (ուր թուրքերը հաստատւել եին արդէն), Մայիսի առաջին օրերին:

Բայց թուրքերը փոխինը եին որդէն լեզուները: Իրեստ-Լիտօվսկի գոշնը այլեւս չէր բաւականացնում նրանց: Ասում էին. Տրապիզոնից յետոյ մենք նոր արիւն ենք թափել, պէտք է հատուցում ստանակ: Ու ուահանչում եին հողային նոր վլչումներ, պիտաղապէս Հայաստանի հաշչին:

Աերսկսւեցին երկար ու անպառուղ խօսակցութիւնները:

Իրեստ-Լիտօվսկու պայմանագիրը, որի մասին մի ամիս առաջ, Տրապիզոնում, լսել անդամ չէինք ուղղում, այժմ դառել էր մեր միակ ու ամենամեծ իղձը: Բայց թուրքերը մնում եին անողջք, պինդ բռնել եին մեր կոկորդից, բաց չէին թողնում:

Մայիսի 15ին թուրքական բանակը անցաւ Արփաշայը (Իրեստ-Լիտօվսկում որոշած սահմանադիմը), մի քանի ժամանութիւնը աղջրէջանցիները մնում եւ շարժւեց դեպի Ղարաբղիսա:

Պրուժիւնը դառնում էր ծայր աստիճան տագնապալի, վտանգի տակ էր ընկնում թիֆլիսը, Արաստանի ու Անդրկովկասի մայրաքաղաքը: Իսկ բանակցութիւնները Բաթումում ոչ մի եւրի չէին յանդում, մնում եին մեռած կէտի վրայ...

16. Այսի մէջ միշտ աճող ներքին անհամաձայնութիւնները այլ եւս չէր կարելի հաշուեցնել ոչ մի կօմպրօմիտով. պայթումը անհուսափելի էր ու անյապալ:

Արացիները տեսնում էին, որ մենք մի աւելցրդ բեռ ենք իրանց համար, որ առանց մեղ նրանք աւելի հետ կը կարդաւորեն իրանց սեփական գործերը: Իսկ աղջրէջանցիների միակ հոգուն էր այժմ՝ միանալ՝ որ առաջ թուրքերի հետ, անցնելու նրանց հօփանաւորութեան տակ ու թուրք բանակի վրայ յենած՝ մննել բաղու: Թուրքական բանակի յաղթանակից յետոյ Անդրկովկասեան դաշնակցութիւնը այլ հու պէտք չէր աղջրէջանցիներին. Վրացիները աւելցրդ եին, իսկ հայերը՝ թշնամի:

Բաժանան ժամը հնայի էր:

Ու ահա Մայիսի 26ին Սեյմը՝ նկատի առնելով որ պատերազմի ու խաղաղութեան խնդրում արմատական տարածախնութիւններ կան Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութիւնը կազմող ժողովը գործների միջև՝ յայտարարեց Դաշնակցութիւնը լուծւած ու վար դրեց իր լիազորութիւնները։

Նոյն օրը ու նոյն շենքի մէջ վըաց Ազգային Խորհուրդը՝ մէծ հանդիսաւորութեամբ՝ յայտարարեց Արաւատանի անկախութիւնը։

Հետեւեալ օրը նոյն արաւ եւ Ազրբէյջանը։

Հերթը Հայաստանին էր։

Պէտք էր արդեօք անկախութիւն յայտարարենք, ի վիճակի ենք արդեօք սեփական պետութիւն կազմելու ու ասկա պահելու այն...։

Պարապ հարցեր են սրանք։ Մայիս ամսի վերջի օրերին այդպիսի հարցեր չեր կարելի դնել։ Էնտրութիւններ անելու տեղ չեր մասցել։ Պատմութիւնը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջև։ պէտք է յանդկնութիւն ունենայինք անցնել վրոյից, եթէ չենք ուզում խորտակել։ Պէտք է տէր գառնայինք մեր Հայրենիքին, ապա թէ ոչ կը կորցնենիք այն — գուցե անդառնախիօրեն եթէ տատանենիք, եթէ ուշացնենիք մեր յայտարարութիւնը, Հայաստան կը մնար *res nullius* (ոչըքի պատկանող իր) ու իրին արդպիսի բաժին կը դառնար հարեւան ներին — թուրքիին, վրացիներին, ազրբէյջանցիներին։

Մայիսի 28ին, ուշ գիշերով, Ազգային կենդրանական Խորհուրդը վճռեց յայտարարել Հայաստան անկախ Հանրապետութիւն եւ իրան գերազոյն իշխանութիւն Հանրապետութեան։

Այդպիսի լիազորութիւն խորհուրդը չեր ստացած Ազգային Համագումարից, բայց կանգ շտուաւ ձեւական արդելքի առջեւ ու յիտագոյում ոչ ոք մոքով շանցկացրեց մեղադրել նրան։ այնքան պարզ էր ամենքի համար, որ ուրիշ ելք չկար։

17. Մայիսի 22—26 տեղի ունեցան Սարդարապատի կոիւները, 25—28ին՝ Ղարաբիլսի կոիւները։

Թերեւ վերջի չիդն էր, որ թափում էր հայ ժողովրդից իր գոյութիւնը փրկելու համար։ Եւ անկասկած է, որ այս յամառ ճակատամարտերը, այն հերոսական ընդդիմադրութիւնը (մանաւանդ Ղարաբիլսինը), որ անսպասելիօրեն յայտ բերեց — ոչ թէ զօրքը (բանակ չկար

այլեւ), այլ ինքը ժողովրդական վանդւածը՝ սա բարձրացրեց մի քիչ մեր արժէքը թուրքերի աշքում ու հնարաւորութիւն տւեց խաղաղութեան դաշն կնքելու։

Հայ պատուիրակները — այս անդամ արդէն Հայաստանի Հանրապետութեան անունից ու Ազգային ժողովի լիազօրութիւնով — վերադարձան բաթում ու Յունիսի 4-ին ստորագրեցին Դաշնակցութիւնը։

Մի նոր դարաշջնան էր սա հայ ժողովրդի պատմութեան մէջ — վաղուց կորցրած ննիքնուրոյն պետական կեանքի վերածնունդ։

18. Օգոստոսի 1ին, Երևանում, բացւեց Հայաստանի Խորհրդարանը ու կազմեց անդրանիկ կառավարութիւնը։

Խորհրդարանը նոյն ազգային խորհուրդն էր, անդամների եռապատկւած թւով. աւելացել էրն արանց վայ վեց թուրք, մի ուսու ու մի եղիդի պատգամաւորներ։

Գերիշխով տեղը պատկանում էր Հ. Յ. Դաշնակցութեան. բայց որովհետեւ մեր ֆրակցիան 47 ձայնից ուներ 18 միայն ու չկարողացաւ կապւել մի ուրիշ ֆրակցիայի հետ, Խորհրդարանը շունցաւ կայուն կենդրոն ու որոշակի գեւած քաղաքական դեմք։

Կայունութիւնն չկար նուեւ, կառավարութեան մէջ առաջին տառը ամսայ լինեցրում շըրս անդամ փախուեց դահիճի կազմը (մնալով հանդիերձ նոյն վարչութեատի նախագահութեան տակ)։

Առաջին դաշնական կօսլիախուել էրն (դաշնակցականներ ու ժողովրդականներ, զինվորական միխատըր շեղոր). բայց կօսլիսիոնը հաստատուն հիմք շուներ տակը, որովհետեւ շուներ ապահովւած մէծամուսութիւն խորհրդարանի մէջ (ժողովրդականները յաճախ բաժանուած էին դաշնակցականներից) ու — որ ամենից էականն էր — չկար ծրագրային որոշակի համաձայնութիւն կօսլիսիօն կազմով կուսակցութիւնների միջեւ։ Մեծապէս խանդարում էր նուեւ այն գիբբը, որ լուսիւ էր մեր կուսակցութիւնը կառավարութեան հանդէսը։

19. Թերեւ մի քիչ առաջ անցնելով, հարկ եմ համարում այստեղ եւ յետոյ մատնանիշ անել խոշօր ստուներից մէկը։

Հայաստան ռամկավար հանրապետութիւն էր։ Դաշնակցութիւնը ու միայն հակառակ չեր զրան, այլ եւ ննիքն էր պահանջում այդ պիս

տական ձեւը։ Հանրապետութիւնն ուներ ռամկավար-որարշամինտական պետութիւններին յատուկ օրդաններ։ Ժողովրդական ներկայացուցիչներից կազմւած մի պալատական օրէնսդիր մարմին եւ պատասխանատու կառավարութիւն։ Խորհրդարանը կազմւած էր գոյութիւն ունեցող չորս քաջազբական կուսակցութիւնների ու ապա ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներից։ Խորհրդարանին յաջորդող պարլամենտը ընտրւած էր ռամկավարական ամենալայն սկզբունքներով։ (Տիուպանդամաման ընտրողական օրէնքը)։ Կառավարութիւնը ստանում էր իր լիազորութիւնը օրէնսդիր մարմնից (Հանրապետութեան նախագահ չուներ չոյաստան), հաշւետու էր ու պատասխանատու նրա առջեւ։

Այս էր ձեւը։

Բայց ուրիշ էր էութիւնը։ Կործնականօրէն մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողութեան տակ առնել թէ օրէնսդիր մարմնը, թէ կառավարութիւնը։ Մենք քաջութիւն չունենք (ոչ ել կարողութիւն) բացէ ի բաց կուսակցական դիկտատուրա յայտաբարելու։ բայց եւ չենք ուղղում մուլ պարլամենտական կարգերի սահմանի մէջ ու փորձ ենք առնում իրականացնել Հայաստանում Իթթիհատականների գործհակերպը։ Կուսակցական դիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ բորբակւած։

Դշնանութեան անհանգույն երկուութիւն էր տուաջ եկել։ Տրապարակում խորհրդարանն ու իր կառավարութիւնը, ստուերի մէջ կուսակցութիւնն ու իր օրդանները։

Հասկանալի է, որ այս երկու կարգի իշխանութիւնները՝ պաշտոնականն ու անպատճոնը՝ կարող են միայն խանգարել ու կաշկանդել մէկը միւսին։ Ճեւական պահանջները թոյլ չեն տալիս, որ կուսակցութիւնը աղատ ու արագօրէն շարժւի, իր կամքը լրիւ արտայայտի։ Իսկ կուսակցութեան միջամտութիւնը թոյլ չեր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածն անի, իր գիծը տանի։

Հասկանալի է նաև, որ այս դրութիւնը շատ էր դժարացնում։ Ի լուրջ ու անկեղծ կօպիսիօն կավմելու գործը, եւ իրօք կօպիսիօնի մէջ մոնող օտար տարրերը հարկադրում են վարել մի քաղաքականութիւն, որ իրանցը չեր, մշակում էր ու նախագծում կառավարութիւնից դուրս, կուսակցական մարմինների մէջ, ուր իրանք չեն կարող ունենալ մուտք ու մասնակցութիւն։

Այս ցաւու խնդրի մասին ես կաղմել եմ անցեալ ամառ՝ պատասխանատու մարմնի յանձնարարութեամբ ու ընդհանուր ժողովին ներկայացնելու համար՝ մի ընդարձակ զեկուցագիր Զեկուցագիրս կարգացել է Պօլսում։ Գումարւած Շըանային ժողովն մէջ Այստեղ բաւականանում են այս մի քանի տողով միայն։

20. Կոյեմիներին ընդհանուր զինադադար յայտարարւեց. Պերմանիան ու իր զինակիցները պարտւած էին, ջարդւած։ յաղթանակը դաշնակիցներինն էր։

Պերմանական զօրքերը հապճեակ հեռացան Վրաստանից։ Սկսեցին քաշւել դէպի իրանց Նախկին սահմանները նաեւ թուրքերը։ Ամսի վերջին Բաթում ափի իջան առաջին անգիտական զօրքերը — մեր դաշնակիցների զօրքերը։

Ցոյսերի նոր զուռ էր բացւում մեր առջեւ թուռւմ էր թէ մեր դրութիւնը Անդրկովկասում պիտի փոխւի արմատօրէն, — փոխւի դէպի լաւը. չէ որ յաղթողները ու գերմանացիներին թիֆլիսում փոխարինողները մեր զինակիցներն էին, չէ որ մենք ել կուել ենք իրանց շարքնում լընդհանուր թշնամիներից մէկի՝ Թիւրքիայի դէմ, Բնական էր յուսուր, թէ մենք պիտի վայելինք անդլիացիների առանձին բարեւացւականութիւնը ու որոշակի տարրերւենք՝ վրացիներից, որ այնքան ֆլիրտ էին արել գերմանների հետ ու մանաւանդ աղբեկյանցներից, որոնք պարզապես անցել էին թուրքերի կողմը։

Դարձեալ միավածած էինք. անդլիացիները շարին այդ տարբերութիւնը։ Ասրծես չը կիտեին կամ մոռացել էին, թէ մենք իրանց դաշնակիցներն ենք։ Իսկ վրացիների ու աղբեկյանցիների հանդեպ ցցց ուին ամսպիսի մեծահոգութիւն, որ միանդամայն անսպասելի, մասսմբ իսկ անհասկանալի էր մոլ համար։

Ի հարկէ, գալու առեցնիք գաւունորէն անդլիացիներից, ասինք. ապերական են այս մարդիկի դաս ամենահեշտ միջոցն էր՝ մեզ անհասկանալի երեւոյնները բացատրելու համար Ապերական են, ասինք, ու որտերս թեթեւացրինք, այլ եւս չը որոնեցինք այդ ապերականութեան աղբիւրմերը։

21. Ինկառեմիների սկիզբներին ծագեց կարճատեւ հայ-վրացական պատերազմը։

Երբ թուլքական բանակը՝ Ալեքսանդրոսի վրայից անցնելով՝ հասաւ մինչեւ Փամբակ ու գրաւեց Ղարաբլիսան, վրացիները օգտւեցին հանգամնելից ու դորք մոցրին հայկական Լոռին Պատրւակը այն էր, թե ուղղում են կանգնեցնել թուլքերի առաջնազգումը դեպի Թիֆլիս։ Բայց թուլքերի հեռանալուց յետոյ ել վրացիները շրջեցին գատարել Լոռին. ընդհակառակը, եռանդօրեւ աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրանց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժկոհութեան արտայայտութիւնները իսկդում էին դաժանօրէն։

Լոռին — կուածաղիկ էր Հայաստանի ու Արաստանի միջև, ամենից ցաւոտը հայ-վրացական սահմանային վիճերի մեջ։

Մեզ վրայ շնչում՝ գործ դնելու նպատակով, Արաստանը փաստորէն Կորիել էր մեր հաղորդակցութիւնը դրսի տշխարհի հետ, փակել էր մեր նեղ սահմաններում։ Նոյն իսկ այն հացը, որ ուղարկում էր զրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերպակրելու համար — այդ հացն էր հանդիպում Արաստանում բավմաղան արգելքների ու ուշակում էր, լրիւ չեր հանում տեղը։

Արաստանը գրաւել էր Լոռին, փակել երկախմուղին ու պաշարել մեղ. այս էր պատերազմի հիմնական պատճառը։

Իսկ անմիջական առիթը՝ Լոռւայ մի քանի հայ դիւլերի ապատամ-բութիւնն էր եւ վրաց կառավարութեան գործադրած անհամսպատաս-իստու միջցները կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նոյն իսկ ինքը ստեղծում) որպէս զի կոտորի ու ահաբեկի հայ աղջ-դարնակութիւնը։

Անհաւանական չէ, որ որոշ գեր կատարել է նաև մեր բանակի մեջ գտնուղ ուսւ սպաների սրովօկտացիան Արաստանում կառավարու-թիւնը կիրառել էր մի քաղաքականութիւն, որի նովատակն էր՝ թուլքը-նել որ առաջ ռուսուկան տարրը (որ բառականին զօրեղ էր Թիֆլիսում)։ Ժեղքացնել նրա ազգեցութիւնը ու աղքայնացնել պետական մեջանիվմից այս նպատակով նա ոչ միայն պաշտօնավորեց էր անում ուսւ պաշտօնիաներին ու զինուորականներին, այլ եւ զանգւածներով արտարում էր երկրից դուրս։ Մեր բանակում կային բառական մեծ թւով ուսս սպաներ, որոնք կապեր ունեին Թիֆլիսում (գուցէ եւ զօր. Դենիկինի բանակի հետ)։ Անհաւանական չէ, ասում եմ, որ սրանք գրգռում էին մեր զինուորական շրջանները Արաստանի դէմ, ստեղծում էին թշնամու-

կան միմնողրտ, որ շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար։

Պատերազմը տեսեց երեք շարամ միտոյն. գ. եկտեմբեր 31-ին՝ ան-դիացիների միջամտութիւնով՝ Խաղաղութիւնը վերականգնած էր արդէն։ Լոռին յայտարարեց ժամանակաւորապէս չեղոք գօտի, վրաց իշխանու-թիւնը փոխարինեց հայ-վրացական իշխանութիւնով, անդիմական կո-մուտրի հսկողութեան տակ։

Այսպիսով՝ պատերազմի ելքը տերարեյաջող չէր մեղ համար, մեր նպատակին հասել էինք կէս շախով (մասաւանդ որ երկամուղային հաղորդակցութիւնն էլ, գիլսաւորապէս չնորհիւ անգլիացիների ներկայ-ութիւնան, վերաբացեց մասամ)։ Բայց եւ ոյնպէս ծանր մտահոգու-թիւնների զուռ էր բաց անում՝ պատերազմի փաստը ինքն ըստ ինքեան։

Հաղին. 4—Ծ ամսայ պետական կեանք ունեինք ու արդէն րոնւած էինք պատերազմի, մինչդեռ երկիրը հալար ու մի ցաւ ուներ րուժելու։ Եւ պատերազմեցնիք այն հարեւանի գէմ, որի հետ սերտօրէն դաշնակ-ցելու ամենից մեծ կարգին ունեինք — չէ՞ որ Արաստանն էր մեր միակ ճանապարհը քաղաքակիրմ աշխարհի հետ հաղորդակցւելու համար։

Մենք հասկանում էինք այդ ու անկեղծօրէն ուղում էինք հաշտ ասպրել վրացիների հետ։ Բայց փաստը այն է, որ չկարողացանք։ Եւ՝ անկախ Արաստանի րոնած դիպից, որ անվիճելիօրէն դատապարտելի էր քիչ գեր չեղ իսպացել նահւ մեր սեպական ապիկարութիւնը, մեր քա-զարական տհասութիւնը եւ պետական կեանքը վարելու անպատճառ-տութիւնը։

22. Ի դէպ է արձանագրել այստեղ նահւ այն անընդհատ կորիւ-ները, որ ունեցել ենք հիստո-արեւելեան սահմանների վրայ ու երկրի ներալը։

Պաշտօնապէս՝ Ազգրեւշտանի հետ պատերազմի մէջ չենք եղել մ.նք, բայց փաստօրէն կռւել ենք Վարսաբարձրում ու յաճախակի ընդհարում։ Ներ ենք ունեցել Պաղախում։ Ա. սպա՝ երկրի ներալ՝ մի շարք արինահիկ կոիւներ ենք ունեցել անզական թուրք ազգաբնակութեան հետ Ազգա-բայցում, Զօդում, Զանգի-Բաղադրում, Ա. եգի-Բաղադրում, Շարուր-Նախի- ջիւնում, Զանգ եղուրում։

Եւ գարձեալ. անհերքելի է, որ Ազգրեւշտանի դիրքը մեր հանդեպ

1 գտնուածից ուղ վկար եռց Ազգից
աշխառասի մշր ոս տղի վմդմմոտ Նուկովի Ազօվովտոհ շանամոքն ուղ
վկար Առուզզ վմիմդ իու Խոշեղահ վմտասէւ Եղչու տակաց մազոհ
Նվզը Անդպավմոյ տսիմդ Նմո Խամոմման մոյրտհ զողցրասուամի Երմզը
զողցրասլորդորհ Ռանուամոքն վկար Եշ մո Վմովի շանի զմո Ազգիցի ամ
գումահ Երգնստ Եղուի մոյր զմուգովի քամդինատ զմուգովի Առունի զմուզ
Երգի Եղուզուտնու զմուցու բանսի մնան ։ (Ազգիցրասիմկատու զմունի
Են ու ու Ազգիցրասիմկատու զուցը բանսինուուզու) մոդզովիլի անենահմանի
մոյզ զոհտասիմկատուի մոյմուտ տսիմդ վմնսի մնսի քրանուուուզ ովին
ոտց Եշ նսոց Են 8շ վոյմու ։ Ռանուզու վուց ուղ զմո — Արանուուզի
զողցրասիմկատու զմունին վումուս — նսոց Եռուզզ Ազգիցրաս
ամուտնու Եղուու ու վկարու մո Անմուսուց զոհութիւն զմո

ուրիս վմցտոտի Դղճոյրցող յոտի Դղճումնի
Նաևոհ մշն վմդզգովը յանսօգուս զուխտութուորուց նղուստ տիկ զմուստու
վր ։ Աղավը յամուտուորուն իսոս վզաւունչը մար ։ Աղնադ նոցք յրասնա
վմուսումն ։ Աղավը յամկ ։ յրասմուսումն ։ Ուղարտոյթ զոհութիւնուին
գումետունց և Աղավը յամս զոհուժունու վզտուունց զզզլ ուի գումետու
շրո վլդոյ Դիսնիվր նմո չը ։ Առոնի վմդզգովնից զոհը յամուտուորուն
ողոգ Դղնի և ջուփից մա զմուխտու Եղոյտ ննն զոհութոյի զնաւ

Ներկայ էր միայն սօցիալիստ-յեղափոխականը, որը գրաւել էր ընդամենը տրս տեղ:

Մենք, դաշնակցականներս, երեւել էինք՝ տարած յաղթանակով, Զեհնք Հասկանում, որ այդպիսի կաղմ ունեցող պարլամենտը՝ պարլամենտ չէ, այլ միայն պարլամենտի ծաղըանկար: Զեհնք Հասկանում, որ դա մի սոսկալի ապացոյց է, թէ որ աստիճանի անպատրաստ է մեր ժողովուրդը պետական կենացքի համար, որ աստիճանի տգետ է ու անփոյթիր քաղաքական իրաւունքների հանդեպ: Զեհնք Հասկանում, որ մեր դաւանած գեմօկրատական իրաւակարգը չի կարելի հաստատել այդպիսի ընտրութիւնների վրայ: Զեհնք Հասկանում, որ մեր յաղթանակը՝ յաղթանակ չէր, այլ կատարեալ պարտութիւն: որ 72 մարդ նստեցը ներկ պարլամենտում, մենք կորցնում էինք մեր ոտի տակի հողը, գեմօկրատիլմի հիմքը: Զեհնք Հասկանում, որ վերցնելով մեր ձեռը անբաժանելիորէն ամրող իշխանութիւնը, մեղ վրայ էինք վերցնում նաև ամրող պատասխանատւութիւնը եւ որ այդ բեռի տակից պատւով դուրս համար՝ չունեինք հարկաւոր ոյժն ու պատրաստութիւնը: Զեհնք Հասկանում, որ մեր սեփական դաստիարակութեան համար մեծ կարիք ունեինք, որ մի զօրեղ օպօղվեիա կոնգրես լիներ մեր կողքին. միշտ դդաստ պահէր մեղ, ի կարդ հրաւիրէր եւ թոշը չտար, որ դուրս դայնիք օրենքի ու իրաւասութեան սահմաններից: Զեհնք Հասկանում, վերջապէս, որ փոխադրելով մեր կուսակցական նիստերը պարլամենտական սրահն ու կոռավարութեան շենքը՝ մեռնում էինք կուսակցականորէն...

Պարբառնուտ չկար Հայտառանում: մի դատարկ ձև էր տուանց պարունակութեան:

Պետական հարցերը քննութեան էին առնեում ու ըստեռում դըստիակ, դաշնակցական ֆրակցիայի սենեակում, ու ապա յայտարարուում պարլամենտի ամրիոնից: Երգք չկար եւ պարլամենտական ֆրակցիա, որովհետեւ սա դրւած էր դաշնակցութեան բիւրօի իիստ հսկողութեան տակ ու պարտաւոր էր կատարելու նրա հրամանները: Զկար եւ կոռավարութիւն. սա եւս ենթարկւած էր բիւրօն, բիւրօի մի տեսակ զործադիր մարմինն էր պետութեան մէջ: Բօլցեւիկեան սիստեմ էր սա: Բայց այն, ինչ որ բօլցեւիկները անում են հետեւղականորէն ու բացայաց: մենք աշխատում էինք քողարկել գեմօկրատական ձեւերի տակ:

25. 1920 թ. Մայիսի առաջի օրերին տեղի ունեցան բօլցեւիկեան ցոյցեր ու ասպատամբութեան փորձեր:

Շարժումն ինեղդւեց առանց մեծ դժւարութիւնների, որովհետեւ յենարան շուներ. երկրի համար բօլցեւիզմը միանգամայն խորի բան էր, ինչ զրափ միջամտութիւն չկար այդ ժամանակ:

Բայց եւ այնպէս, շատ լոնրոշ է այն հանգամանքը, որ մի քանի տասնեակ բօլցեւիկ երիտասարդներ կարողացան կաղմակերպել աղմլուկալի ցոյցեր (նոյն ինչ նրեւանում, կառավարութեան քթի տակ), պրոպագանդ անել զօրքի մէջ, գրաւել Ալեքսանդրոսիոլում երկաթուղու կայարանը, տիրանալ ղըահակիր գնացքին...

Սա ցոյց է տալիս, թէ որքան թոյլ, որքան անտեղեակ ու որքան անփոյթ է եղել կառավարութիւնը:

26. Այս շարժումների հետեւանդով կամ սրանց հետ կապւած՝ տեղի ունեցաւ մի տեսակ օօր օ՛Էլա. պարլամենտական կառավարութեան փոխարինեց՝ դիկտատորական լիազօրութիւններով՝ Հ. Յ. Դաշնակցութեան բիւրօն (այսպէս անանաւ գիւրօ-կառավարութիւնը):

Օրէնքի պահանջած ձեւականութիւնները կատարեցին ու ամրող գործողութիւնը բիւնադրեց պարլամենտական կարգերի շրջանակի մէջ, — այսպէս: Մայիսի 5 ին պարլամենտը (բիւրօնի հրահանգով, իհարկե) ընդունեց վարչապետ Ա. Խատիսեանի հրաժարականը (որ բիւրօն պահանջով էր ներկայացւած, ու նոր դահլիճ կաղմնելը յանձնարարութեց (բիւրօնի հրահանգով)) Դոքտ. Հ. Օհանջանեանին: Օհանջանեանը անմիջապէս, նոյն նիստին, ներկայացրեց իր մինիստրների պատրաստի ցուցակը. Հ. Յ. Դաշնակցութեան բիւրօն էր սա, ամրող կաղմնը ու առանց օտարների: Պարլամենտը իր հաւանութիւնը տևեց, ապա յայտարարեց ժամանակաւոր լնդհստում իր նիստերի ու մինչեւ տշխատանքների վերսկսելը՝ փոխանցեց նորակալմ կառավարութեան իր բոլը իրաւունքները:

Դիկտատորական իշխանութիւն էր, որ տալիս էր դաշնակցութեան բիւրօնն Հայաստանի պարլամենտը (այսինքն՝ դաշնակցական վրակցիան, այսինքն՝ ինքը բիւրօն):

Սա հակառակ էր դաշնակցութեան Խրդ ընդհանուր ժողովի կուրուկ որոշման ու մի շաբթ անդատեհութիւններ ուներ: Բայց անհեր-

քելի է մի բան. այսպիսով վերացւում էր երկուուկեսը, վերացւում էին տգեղ, վարկարեկիչ քողարկումները ու դրութիւնը պարզւում էր. վերջապէս, իր խական կերպարանքով յայտ գալիս շատ աւելի գերադասելի էր, որ կուսակցական բիւրօն կառավարէր երկիրը բացայացուեն, քան քողարկւած պարյամենափառ կառավարութեան անունների տակ։

27. Աշնան սկզբին ծագեց հայ-թուքական պատերազմը, որ վերջնականապէս կուրեց մեր մէջքը։

Կարող էինք արդեօք խուսափել այդ պատերազմից։ Հաւանականորէն ոչ։

1918 թւականին ջախչախւած թիւրքիան երկու տարի ձգած էր հանգիստ, առանց պարտութեան հետևանքները ձեւակերպելու ու նոր դրութիւն հաստատելու համար միշտներ ձեռնարկելու։ Այդ երկու տարւայ ընթացքում թուրքերը շունչ քաշեցին, կազդուրւեցին։ Հանդէս եկան երիտասարդ, ձեռներեց ու հայրենասէր զինւորականներ, որոնք Անատոլիի խոլքերում սկսեցին արագօրէն վերակաղմել բանակը։ Թուրքերի մէջ ուժգորէն արթնացել էր աղգային դիմակցութիւնը ու խնդրապատճենան բնազդը։ Սեւրի դաշնագրին պէտք է հակադրեին ուղմանկան ոյտ, որպէս զի ապահոված լինէին իրանց ապագան գոնէ փոքր Ասիայում։ Պարունակութիւնը հանդէս պիտի բերէր ոչ այնքան հիւսիս-արեւելքում, որքան հարաւ-արեւմուտքում։ Բայց այնտեղ կենդրունանալու ու Յունաստանի դէմ ճակատ պահելու համար պէտք էր կանխապէս ապահովէին իրանց թիկունքը հայկական սահմանների վրայ։ Գուցէ կարիք ունեին զէնքի ու զինամելքութիւնը, որ մենք ամբարել էինք Ղարսի ու Ալեքսանդրոսի պահեստներում։ Գուցէ եւ այն, որ պահանջ էին զգում փորձելու իրանց ոյժերը նախ թոյլ հակառակորդի վրայ, որպէս զի ինքնավստահութիւն ձեռք բերէին աւելի մծ ու դժար ձեռնարկի համար . . .

Ոչ ոք չի կարող հաստատել, թէ այդ տրամադրութիւններն ու մտադրութիւնները թուրքերը իրազ ունեին. բայց հաւանական է որ ունենային, ուստի եւ հաւանական է որ պատերազմը անխուսափելի էր (քանի որ նա պէտք էր թուրքերին)։

Այս ենթադրութիւններով հանդերձ մի փաստ մնում է անհեր-

քելի, աղաղակող. մենք չենք արել ոյն ամենը, ինչ որ պէտք է անեինք — պատերազմից խոյս տալու համար։ Անկախ նուանից, թէ որքան կը յաջողէինք՝ մենք պէտք է փորձենք հաշտութեան լեզու գտնելու թուրքերի հետ Սա է, որ չենք արել։

Այս չենք արել շատ պարզ, բայց նոյնափ էլ աններելի սպատառով. մենք անտեղեակ ենք եզել թուրքերի խկական ոյժի մասին ու շատ վստահ ենք եղել մեր սեփական ոյժերի վրայ։ Այսուղ էր հիմնական սիալը։ Չենք վախինուամ պատերազմից, որովհետեւ վստահ ենք թէ կը յաղթենք։ Անփորձ ու տղետ մարդկանց յատուկ անփութութիւնով, մենք տեղեկութիւն շունեինք թէ ինչ ոյժեր են կազմակերպել թուրքերը մեր սահմանադրին եւ չենք դրուշանում։ Ընդհակառակը, Օլթի հապճեպ դրաւումը՝ ձեռնոց էր, որ կարծես դիտմամբ նետում էինք թուրքերի երեսին, կարծես ինքներս որոնում էինք աւելի շատ պատերազմ։

Երբ սահմանի վրայ վինական լնդհարութները սկսւած էին արդէն, թուրքերը առաջարկեցին մեզ տեսնել ու բանակցել Մենք մի արհամարհական ժեստով մերժեցինք առաջարկը ծւ դա մեծ յանցանք էր։ Ու այն մոքով, որ վստահութիւն կար թէ բանակցութիւնները յաջողէ ելու էին անպատճառ, այլ ոյն մոքով, որ մի խաղաղ ելք գտնելը անկարութիւնի շէր (անհաւանական, բայց ոչ անկարութիւն)։ Ցամենայն դէպս, մենք որոշ շաներ ունեինք՝ թուրքերին խօսք հասկացնելու։

Պետք է յիշել ու հաշի առնել, որ 1920 թ. աշնան մենք բոլորովին զանուն ունկանելու պահանջման շէնքի թուրքերի աշքում։ Կախորդ երկու տարիների զուլումը անցել էր արդէն կամ անցնելու վրայ էր. ժողովուրդը մի քիչ կշտացել էր արդէն, մի քիչ հանդստացել, կազդուրւել. ունեինք բանակ, որ լաւ զինւած էր անգիտական զէնքերով ու մաքուր հագնած անզինական հագուստներով. ունեինք բաւականաչափ աւազմապաշտոր։ Մեր ձեռին էր Ղարսի պէս կարեւոր բերդը. վերջասրէն — եւ որ ամենից ցուցադրելին էր — հրադարակում կար Սեւրի դաշնագիրը, որ այն ժամանակ վարկարեկւած մի թուրքի կտոր չէր, այլ մի զօրեղ զէնք թուրքերի դէմ։

Մեր դրութիւնը այլ եւս այն չէր, ինչ էր բամեռումում, 1918 թ. Մայիսին։ Մենք կարող էինք յուսալ, թէ մեր խօսքը հաշի կ'առնեի, մանաւանդ որ իրանք թուրքերը գեռ եւս պարտւածի վիճակի մէջ էին։

Այդ փորձը չարինք:

Ի՞նչ պիտի առաջարկեին մեղ թուրբերը, եթէ ընդունեինք բանակցելու հրաւելը:

Հաւանականորեն պիտի սկսեին բաժումից ու բրեսո- վիտօլսկից եւ առաջ աստիճանաբար զիջելով՝ հասնեին մինչեւ 1914 թւականի սահմաները. դուցէ մի քայլ ել ետ գնային, հրաժարւեին նուեւ բայադից ու Ալաշկերտից: Անհաւանական է, որ սրանից աւելի զիջող լինեին — նոյն իսկ 1920 թ. Սեպտեմբերին Փոխարքենը կը պահանջէին, ի հարկէ, որ Հայաստանի կառավարութիւնը հրաժարւեր Անդրի դաշնադրով նախատեսնաւուն իրաւունքներից:

Ի՞նչպէս կ'ընդուներ այդպիսի մի առաջարկ Հայաստանի կառավարութիւնը:

Կը մերժէր, անկասկած: Չեր ընդունի, չեր յանդդնի ընդունելու եւ կը գերադասէր պատերազմը: Եւ այդպէս կ'անէր ոչ միայն գաշնակցական բիւրո- հառավարութիւնը, այլ եւ ամէն մի ուրիշ հայ կառավարութիւն: Ընդդում եմ այս հանդամանքը, որովհետեւ սրանով զդալիօրեն սահմանափակում է մեր կուսակցութեան յանցանքի չափը:

Կառավարութիւնը չեր յանդդնի ընդունելու, որովհետեւ բոլոր քաղաքական կուսակցութիւններն ու խմբակցութիւնները, ազգային բոլոր դիւնագէտները, կոչւած ու անկոչ հայրենիք վրեկողները — թէ երկրի ներսը եւ թէ մանաւանդ երկրից գուրս — բոլոր իրեն մի մարդ կ'ըմբռոտանային, կը քարկոծէին, միարեքան դաւաճան կը յայտարարէին այդպիսի մի կառավարութիւն: Սեւրի դաշնագիրը շացրել էր բռլորիս աշքերը, կաշկանդել միտքը, միմացրել իրականութեան յիստակցութիւնը:

Այսօր մենք հասկանում ենք, թէ որքան շահած կը լինեինք, եթէ 1920 թ. աշնանը՝ Սեւրի դաշնագրի գնով՝ անմիջական համաձայնութեան եկած լինեինք թուրքերի հետ բայց այն ժամանակ չեինք հասկանում:

Սոսկ ենթադրութիւններ են սրանք ու կարելիութիւններ, որ յիշատակում եմ միայն այն ժամանակայ մտայնութիւնը բնորոշելու համար:

Իսկ իհաստը՝ պատերազմն էր:

Փաստը այն էր — աններելի իհաստ — որ ոչնչ չարինք պա-

տերազմից խուսափելու համար, հակառակը՝ ինքներս անմիջական առիթ տևինք պատերազմի: Աններելին այն էր, որ տեղեակ չեինք թուրքերի ռազմական կարողութեան մասին ու չեինք ճանաչում մեր սեփական բանակը:

28. Պատերազմը վերջացաւ մեր կատարեալ պարտութիւնով:

Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինւած ու լաւ հագնւած, ըսկուեց. զօրքերը շարունակ նահանջում էին կամ զիւքերը լքում, զէնքերը թափում ու ցրում գիւղերը:

Բանակը բարոյակրւած էր նելքին կոխաների շրջանում, անմիտ աւերութիւնների ու անպատճի թալանների շնորհիւ: Բարոյակրւած էր ու յոդնած: Խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսւել էր Բիւրո-Կառավարութեան կողմից: Քանդել էր զինուղական կազմի ամրողութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ուղղմական օդին, կուռ կաղմանկերպութիւնն ու կարգապահութիւնը — ուրեմն եւ ընդդիմադրական ոչքը — թուրքացած էին ծայր աստիճանի ու գա անոսկնկալ էր կառավարութեան համար. կառավարութիւնը եւ միքը զննուղական մինիստրը՝ չեին ճանաչում բանակը:

Ապա մի ճակատագրական սխալ արաւ կառավարութիւնը. զօրքերի թիւը աւելացնելու նպատակով, նոր ու նոր զինակոշներ էր անում, զէնքի տակ առնում հասակուոր, յոդնած, ընտանեկան ու տնտեսական հոգսերով ծանրաբեռնած մարդկանց, հաղթեով ձգում ուսերին զինուղական վերարկուն, հրացանը ձեռը զնում ու անմիջապէս ճակատ ուղարկում: Պատրաստի գեղեցիկոներ էին սրանք, որ մի աւելորդ բարոյակրում ու կաղմանութում էին մոցնում զօրական շարքերի մէջ:

29. Նոյնիւերի երկրորդ կիսին, երբ Կարա-Բէքիր փաշայի յաղթական զօրքերը արդէն Ալեքսանդրոսը էին հասել, Բիւրո-Կառավարութիւնը ներկայացրեց Պարլամենտին իր հրաժարականը. այլ եւս չեր կարող մնալ իշխանութեան գլուխը, պարտած էր ու պարտութեան իսկ հետեւանքով՝ վարկարեկւած: Ապա պէտք էր թուրքերի հետ խաղաղութեան բանակցութիւններ սկսել եւ գերադասելի էր, որ բանակցողները նոր մարդիկ լինեին:

Մի փայտ տատանումներից յետոյ (սկզբից ծրագրում էր ուրիշ կազմի դահլիճ) կաղմանց Ս. Արացեանի կառավարութիւնը, դաշնակցողները նոր մարդիկ լինեին:

ցականներից ու սօցիալիստ-յեղափոխականներից։ Դաշնակցական մի-նիստրները պատկանում էին կուսակցական “ձախող նկատուած թեւին, ինքը նոր վարչապետը ճանաչւած էր իրեւ ռուսական օրիենտացիայի մարդ։ Իսկ սօցիալիստ-յեղափոխականները անձնական կապեր ունեին հայ-բօլշևիկեան շըջաններում։

Մի հեռաւոր յոյս կար, թե բօլշևիկների հրապարակ գալու դեպ-յում (մի բան, որի անխուսափելիութիւնը սկսում էինք հասկանալ արդէն), այսպիսի կազմ ունեցող կառավարութիւնը թերեւս կարողա-նայ մի ընդհանուր լեզու դժոնել նորեկների հետ։

30. Թուրքերը գրաւել էին արդեն Ալեքսանդրովում։

Միաժամանակ հայ բօլշևիկները, սուսական կարմիր զօրքերի գլուխն անցած՝ մոտան Աղստաֆայի կողմից հջեւան ու դելիման։

Կար արդեօք որ եւ է համաձայնութիւն բօլշևիկների ու թուր-քերի միջեւ։

Մեր շարքերում շատ տարածւած է այդ համոզմունքը։ Կարծում եմ, սակայն, որ սիալ է այդ յամենայն գեպո՞ զրական ապացոյց չկայ։ Հաւանական է, որ բօլշևիկնեան գործակալները (կամ բօլշևիկնեան տրամադրութիւն ունեցող անհատներ) աշխատել են քանդել ներսից մեր բանակը։ Բայց զրա համար հարկաւոր չեր որ եւ է համաձայնու-թիւն թուրքերի հետ։ յետոյ՝ մեր պարտութիւնը արագացնելու համար շատ էլ կարեւոր չեր բօլշևիկների միջամտութիւնը։ բաւական էին Շօրագեալցի բիձանները, որոնց միակ միտքն ու միակ ցանկութիւնն էր՝ շուտով տուն վերադառնալ, հաւաքել, կասել ու ամրագել հացերը։ Իսկ եթե թուրքերը դալու են՝ փախցնել ընտանիքն ու տաւարը մի ապահով տեղ…

Բօլշևիկների դաւագրութիւնը չեր մեր պարտութեան պատճառը, ու իսկ թուրքերի ոյժը (որ շատ էլ մեծ չեր այն ժամանակ), այլ մեր սիրական ապիկարութիւնը։

Անշուշտ, բօլշևիկները օգտւեցին մեր պարտութիւնից եւ շատ բնական էր դայ Բայց զրա համար անհրաժեշտ չեր, որ կանխապես համաձայնութեան եկած լինեին թուրքերի հետ։

Դժար չէ հասկանալ, որ Ռուսաստանում յաղթանակը տանելուց ու Ազգեյշանում հաստատելուց յետոյ, բօլշևիկների հետեւեալ

քայլը ովհիտի լիներ՝ մննել նաեւ Արաստան ու Հայաստան։ Ժամանակի խնդիր էր սա։ Պետք էր ընտրել մի բարեյաջող ժամ՝ գործողութիւնը առանց գլխացաւակների կատարելու համար։ Հայաստանի ժամը հնչեց ու բօլշևիկները արին Դեկտեմբերին այն, ինչ չը յաջողեցան անել Մայիսին։

31. Դեկտ. 1ին (թե Նոյեմբ. 30ին), Ալեքսանդրովում, մեր պատսիրակները ստորագրեցին թուրքերի հետ մի համաձայնութիւն, որ շատ էլ չէր տարրերում Բամումի դաժան դաշնագրից։

Նոյն դեկտ. 1ին Արացեանի կառավարութիւնը հրաժարուեց իշ-խանութիւնից ու յանձնեց այն բօլշևիկներին։

Բօլշևիկները մտան Հայաստան առանց որ եւ է ընդդիմադրու-թեան հանդիպելու։ Մեր կուսակցութեան որոշումն էր սա։

Երկու պատճառ ունենակ այդպես վարելու։ Մեկ որ չեինք կարող ընդդիմադրել, եթե նոյն իսկ ցանկանայինք — պարտած էինք, ուժա-սպառ։ Երկրորդ, յոյս ունենակ թե Խորհային իշխանութիւնը յինւած Ռուսաստանի վրայ՝ թերեւս կարգանայ կարգաւորել մի քիչ պետական կեանքը — մի բան, որ մենք ինքներս, մենակ մնացած, չեինք կարողացել անել ու պարզ էր արգելն չը պիտի կարողանայինք այլեւս։

Մեր ցանկութիւնն էր. թողնել որ բօլշևիկները անարգել կառա-վարեն երկիրը. մեալ լօյալ նոր իշխանութեան հանդեպ. գործակցել նրա շինարար աշխատանքներին։

Միաձայն չեր այս որոշումը։

Կային անհայշտներ, որոնք ոչ մի լու բան չեին սպասում բօլշևիկ-ներից, պահանջում էին ընդդիմադրութիւն ու կոիւ, նոյն իսկ ընդու-ները պարտութեան անխուսափելութիւնը։ Փոքր էր սրանց թիւը։ Երբ առաջարկը մերժեց, ամենից հետեւողականները թողնել երկիրն ու հեռացան։

Կար եւ ուրիշ մի փորբամաժնութիւն, առաջինին հակառակ. սա ուղում էր կուսակցօրեն մերձենալ բօլշևիկներին ու քաղաքական լլսկ կաղմել նրանց հետ։ Արանք առանձնացան, հանդէս եկան “ձախ” դաշնակցականների անւան տակ ու բօլշևիկնեան ողով յայտարարու-թիւններ արին։ Բայց յաջողութիւն չըսնեցան. բօլշևիկները իրաւացի-օրեն կասկածեցին սրանց անկեղծութեան վրայ ու երես չը տւին։

32. Խրկու եւ կես ամիս (առաջին շրջանում, մինչեւ վեհտրւարեան ապստամբութիւնը) կառավարեցին երկիրը բօշեւիկները:

Հաւատեների յշյուրը լարդարացան: Այն օգնութիւնը — քաղաքական ու տնտեսական — որ սպասում էինք Ռուսաստանից, շտացւեց: Ապա՝ հաստատեց մի ըեժիմ, որին չի կարելի տալ ուրիշ անուն, քան սանձարձակ ու վայրադ բոնութիւն:

Ամեն մի դիկտատուրա՝ արդեն իր եռութեամբ՝ բռնութիւն է եւ ուրիշ բան չի կարող լինել: Ամեն մի յեղափոխական կառավարութիւն՝ կուպի շրջանում՝ հարկադրւած է դիմելու կտրուկ ու ծայրացեղ միջոցների, — սա եւս մի անխուսափելի անհրաժեշտութիւն է, որ բղասում է զրութեան էռութիւնից: Բայց բօշեւիկների բռնութիւնը ու Հայտստանում դործագրւած միջոցների դաժանութիւնը ունեին մի առանձնայատուկ դիձ, որ ամենից աւելի գրգռիչ ու անհանգուրծելի են, — այն, որ անխմաստ էին բռնութիւնները, աւելորդ ու տննպատակ:

Եթե բօշեւիկները առաջին շրջանում ցյց տային մի քիչ քաղաքական տաքրտ (այնչափ, օրինակ, որչափ ունեցան յետագայում), նրանց զրութիւնը միանդամյն ապահովված կը լիներ Հայաստանում: Հակադիր ոյժեր, հակառակ հոսանքներ, դաւադրող տարրեր չկային ասպարիզում: Բայց բօշեւիկները չը հասկացան այդ, որնեցին հակայեղափոխութիւն սյնտեղ, ուր նա չկար ու իրանց դեմ լինեցին ժողովուրդը:

Փետրուարեան ապստամբութիւնը — բօշեւիկների գործն էր ակտուովվին, բնական հետեւանդ նրանց բռնութիւնների ու մանաւանդ՝ անվերջ բռնագրաւութեների. որ քանոյում էին ժողովրդական տնտեսութեան վերջի մնացորդները, զբուռ էին սովորական մարդկանց վերջի կոտր հացից:

Դաշնակցութիւնը ոչ միայն չի կազմուկերպել, ոչ միայն չի ցանկացել, այլ եւ հակառակ է եղել ապստամբութեան:

Պիտեմ, որ ապստամբութիւնն նախօրեակին, մի քանի անհատ դաշնակցականներ, մի քանի գիւղիրամ (մասնաւորապէս՝ Կոռայքում) որոշ մասնակցութիւն են ունեցել նախադատաւոտութիւնների մեջ: Բայց սա կուսակցութեան դրույ չէր, այլ կուսակցական անհատներին Ապստամբութիւնը բռնկւելուց յիտոյ էր միայն, որ կուսակցութիւնը հրապարակ եկաւ, և յս սնուկամ եւս նա տարւեց մասսայական հոսանքով ու գլուխ անցաւ մի շարժման, որի հեղինակը նորը չէր:

33. Ապստամբութիւնը դուրս քշեց բօշեւիկներին Հայաստանի կենդրութիւն դեպի ծայրագաւառներ, — դեպի Շարուր ու Պաղամի Անմիշապէս հաստատւեց Հայրենիքի փրկութեան կօմիտէն, որ իր ձեռն առաւ երկրի իշխանութիւնը ու վարեց կուսները:

Ամիս ու կես տեսեց քաղաքացիական պատերազմը:

Մեր շարբերում տարածւած է այն համովմունքը, թէ ապստամբ ժողովուրդը լաւ կռւեց ու եմք յաջողութիւն շռնեցաւ, պարտւեց — պատճառը բօշեւիկների գերազանցօրէն մեծ ոյժն էր: Ես հակառակ կարծիքի եմ: Լաւ կռւեցին, իսկապէս հերոսաբար կռւեցին՝ բօշեւիկները, իսկ մերունք վատ կռւեցին: Եմք լաւ կռւէին, առաջին իսկ շարաթեայ ընդացքում կը ջարդէին հակառակորդին թէ Ամարլուի եւ թէ Ելենօվկայի ճակատներում (հակաբօշեւիկնեան Արաստանը ղեռ կանգուն էր, զբսից օգնութիւն գեռ չեին ստացել բօշեւիկները ու իրենց սեփական ոյժը շատ անշան էր Հայաստանում): Առաջ կռւեցին ոչ այն պատճառով, ի հարկ է, որ չեին ուղում կռւել (եմք չուղենային՝ չեին ապստամբի եւ տեղի չեր ունենայ այն ընդհանուր, անօրինակ խանդավառութիւնը, որին ականատես եղանք Խրեւանում, ապստամբութեան առաջին օրերին). այլ այն պատճառով, որ վստահութիւն շռնեին իրանց ոյժերի վրայ, չեին հաւատում յաջողութեան:

Ապստամբութիւնը — ջլացնցում էր, տարիերային, անգիտակից ու անհաշիւ: Բանկւեց յանկարծակի, մի վայրկեան յոցտ բերեց մեծ ոտեւորութիւն ու ոյժերի լարում: Բայց իսկոյն իջաւ, յուսալքւեց, զողորշխացաւ:

Չեմ ուղում ասել, որ եմք ապստամբները լաւ կռւէին, կը խորտակէին Խորհրդային իշխանութիւնը, — ոչ, պարտութիւնը կանոնուշած էր ու անխուսափելի (մասնաւանդ Արաստանի անկումից յետոյ): Մենք կարող էինք կռտորել Հայաստանում եղած բոլոր բօշեւիկներին (եւ դժար բան չեր դա, եմք ապստամբութիւնը մի քիչ կալմակերպւած լինէր). Բայց այնուեղ էր Առուսաստան իր կարմիր բանակով. եւ հայ գիւղացիութիւնը չեր — ոչ էլ Հ. Յ. Դաշնակցութիւնը — որ պիտի գիւղացիութիւնը նրանց Խոջում եմ ասել միայն, որ ապստամբութիւնը իր իսկ ներսը կրում էր արդէն պարտութեան սաղմը, որովհետեւ հաւատ շռներ յաջողութեան:

34. Ապրիլի 2ին երրորդ բազեւիկները հասել էին արդէն քանաքեր ու բռնել մայրաքաղաքի վրայ տիրող բարձրութիւնները՝ դատարկեցինք Երեւան ու Բաշ-Գառնիի վրայով անցանք Դար-Ալագեավ:

Ապստամբների, Կուսակցականների ու մարտիկների հետ եր նաև մի ահագին ամրու — հաղարներով ու հաղարներով ահարեկւած մարդիկ, որոնք հաշիւ չեին տալիս իրանց, թէ ուր են գնում եւ ինչի համար գնում:

Անփուսափելի պարտութիւնը կատարւած փաստ էր արդէն Այն, ինչ որ տեղի ունեցաւ յետագայ երկու-երեք ամիսների լնժացքում՝ Դար-Ալագեավի ու Զանգեղուրի մէջ՝ պայքար չէր այլնու, այլ հոգեվարք:

Երեւանի անկումից յետոյ, Լեռնահայաստանի խորհրդացումը՝ օրերի ինդիր էր միայն եւ մեր ներկայութիւնը թերեւս արագացրեց — ասում եմ որոշ վերապահումներով — իրերի բնական լնժացքը:

Մենք կարծում էինք թէ անցնելով Լեռնահայաստան՝ Կուժեղացնենք տեղացիներին, մի բան կ'աւելացնենք նրանց դիմադրական կարողութեան վրայ: Հաշւի չենք առել, որ պարտւած, կաղմալուծում ու նահանջի ճամբան բռնած խումբերը — եւ մանաւանդ սարսափահար աւելուր կարող են առաջ բերել միայն լքում ու յուսահատութիւն:

Տեղացիները խեթ աշքով նայեցին մեզ, անհիւրնեկալ եղան. աւելի դոհ կը լինեին, եթէ ամենեւին եկած չը լինեինք, — մանաւանդ որ ուսում էինք իրանց վերջի պատառ հացը:

Ակամայից շվոթ էինք մոցրել տեղական կեանքի մէջ:

Ծագել էր մի խուլ հակառակութիւն՝ եկոր ու տեղական իշխանութիւնների մրցեւ: Կազմում էին, լուծում, նորից կազմում ու իրար փոխարինում զանազան անուններ կրող մարմիններ, որոնցից ոչ մէկն էլ իրական իշխանութիւն չէր ներկայացնում:

Մարտական թափը հալցում էր ու պակասում օր օրի վրայ, նկոր զինւորների մի մասը, անօթի ու գժգոհ տեղացիներից, տուն վերաբառնալու մասին էր մտածում միայն: Տաճկահայ խմբերը (զինւած ու անզէն) ձգտում էին օր առաջ Արտաքսի ափը հասնել ու դարսկաստան անցնել: Տեղացիները տեսնում էին զօրքերի քայբայած վիճակը, տիրող անիշխանութիւնը ու կասկածում էին իրանց կատարեալ անշորութեանը վրայ՝ շեմքի վրայ կանգնած բոլցեւիկների հանդեպ:

Ամրան վերջներին դատարկեցինք Զանգեղուրը, Ռամեալար Հանրապետութեան վերջի կայանը:

Հայաստան խորհրդայնացաւ ամրողութիւն:

35. Ո՞ն էր անկախութեան շրջանում կատարած մեր դիւանագիտական աշխատանկը զրսի աշխարհում (Պոլսում, Եւրոպայում ու Սմբեկայում) եւ ի՞նչ արդիւնք էր տւել այն:

Որովհետեւ այս պատմական ամիսութեամբ — հակառակ իմ ցանկութիւնը — երկարացաւ շափից աւելի, կը բաւականանամ յիշտակելով երկու ծայրերը միայն — սիմվոլ ու վերջը:

1919 թ. գարնան, Պարիսում, Հանրապետութեան պատուիրակութիւնը, Աղդային պատուիրակութեան հետ միասին, ներկայացրեց դաշնակից մեծ պետութիւններին մի յուշագիր՝ մեր պահանջները Խաղաղութեան Համամալողութիւն:

Ըստ այդ յուշագրի, հայ պետութեան սահմանների մէջ պիտի առնեեին:

Ա) Անդրկովկասեան Հանրապետութիւնը ընդլայնացրած սահմաններով (Երեւանեան նահանգը ամբողջովով), Հարսի շրջանը առանց Արդահանի հիւսիսային մասից, Թիֆլիսի նահանգի հարաւային կեսը, Կանձակ նահանգի հարաւարեւմնեան մասը):

Բ) Թիւբրուհայաստանի Խօմը վիլայեթները (Ան, Բաղեշ, Դիարբեկիր, Խարբեկդ, Մերաստիա, Կարին ու Տիարիզըն, Պուր ձգելով միայն Դիմորբէքիրի հարաւային ու Մերաստիայի արեւմուեան շրջանները):

Վ) Կիլիկիայի ջորս սանջակները (Մարտա, Սիս, Ճեղել-Բերեքէլու ու Ատանա, Ալեքսանդրետով):

Մրադրութ էր ու պահանջում մի լայնատարած պետութիւն, մի մեծ Հայաստան Ան ծովից մինչեւ Միջերկրականը, Ղարաբաղի լեռներից մինչեւ արաբական անապատները:

Ո՞րովհից ծնունդ առաւ աշխարհական պահանջը պահանջը:

Այս Հայաստանի կառավարութիւնը, ոչ էլ պետական կեանքին ու զօրքեթիւն տւող կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դանակցութիւնը՝ մոռով անգամ չեին անցկացրել այդպիսի մի ցործադրութ տղայական ծրագիր՝ Ընդհանուր կառակը, մեր պատուիրակութիւնը՝ իրեւ հրահանգ՝ տարել էր

Նրեւանից շատ համեստ պահանջներ, համապատասխան մեր շատ համեստ կարողութիւնների:

Ի՞նչպէս պատահեց, ուզեմն, որ պատւիրակութիւնը ստորադրեց ու ներկայացրեց նովի պահանջնը:

Տարօրինակ ու միանգամայն անհաւատալիք կը թւի, բայց փաստը այն է, որ հայկական Պարիզը որոշեց այդ եւ մեր Պատւիրակութիւնը պարզապէս տարւեց գաղղութներում տիրով հոսանքով, ենթարկեց դրսի ազդեցութիւններին ու թոյլ տռեց ահամեկելու իրան — մի բան, որ այնքան ծանօթ է մեղ:

Պատւիրակութեան ասել եին, որ եթէ չը պահանջի այդ հրապուրիչ սահմանները, թռուբքահայերը (յանձինս Աղքային պատւիրակութեան) կ'անջատեն իրանց դատը՝ Արարատեան՝ Հանրապետութեան դատից ու մեղանից անկախ գիմում կ'անեն պետութիւններին Ապուանել եին փոքր Հայաստանի մանդատը Հմերիկան յանձն չի տանի, իսկ սովոր կ'առնի: Եւ որովհետեւ մեր դատը պետութիւնների առաջ պաշտպանելու համար շատ վտանգաւոր կը լինէր երկու տարրեր, իրար հետ պայքարող մարտինների ու երկու տարրեր, իրար հակառակ սահմանային պահանջների գոյութիւնը, ապա որովհետեւ ամերիկան մանդատը՝ մեր մեծագոյն ցանկութիւնն էր ու լաւագոյն յշյուր — ուստի Պատւիրակութիւնը՝ հակառակ ստացած հրահանգների՝ դրեց իր ստորագրութիւնը ու ներկայացրեց յուշագիրը: Խակ Հայաստանի կառավարութիւնը՝ իր անունից ներկայացւած պահանջի մասին՝ տեղիկութիւն ստացաւ երկու թէ երեք շաբաթ յետոյ միայն:

Արկնում ևմ դարձեալ: Մեր պատւիրակութիւնը մեղադրելու համար չէ, որ արձանագրում եմ այս դեպքը եւ ոչ ել ուղում ևմ ասել, թէ եթէ այն ժամանակ չափաւորած լինէինք մեր պահանջները, յետագյում տարրեր արդիանք պիտի ստանայինք: Ոչ, ուզում ևմ մրայն յիշեցնել մի անգամ եւս, թէ ինչպէս՝ ամենից հիմնական, ամենից մեծարժեք ու ամենից պատասխանատու խնդիրներում իսկ՝ մենք չենք ունեցել մեր հաստատուն կամքը, չենք վարել դործերը ըստ մեր հասկացողութեան, չենք գնացել մեր սեփական ճամրով, այլ թոյլ ենք տւել: որ ուրիշները տանեն մեզ իրանց ետեւից, ուր կամենան:

Պարիզի յուշագիրը շատ ոգեարեց խակ մարդերը, մանաւանդ գաղղութներում: Այնպիսի մի մասնութիւն էր ստեղծւել, որ կարծես

գծելով թղթի վրայ պետութեան սահմանները, արդէն տէր ենք դառել այդ սահմաններին կամ՝ առնւազը՝ անխախտելի իրաւունքներ ենք ձեռք բերել: Այնուհետեւ ամէն մի հասկած յաջողելու մասին թարգմանւում էր իրեւ փաքրի հոգութիւն, չափաւոր լինելու ամէն մի տրամադրութիւն իրեւ գաւաճանութիւն եւ ամէն մի հակառակութիւն դրսից՝ իրեւ թշնամութիւն հանդեպ մեր դատի ու իրաւունքների:

Անհմաստ պահանջներին ու չափաղանցրած պահանջներին բնականօրէն պիտի հետեւէր դառն հիասթափում:

Սեւրի դաշնագիրը, որ չէր յիշատակում ոչ Կիլիկիա, ոչ Խարբերդ ու ոչ Ավսուլ (բայց նախատեսնում էր այնպիսի լայն սահմաններ, որոնք թերեւս վեր եին մեր կարողութիւններից) — արդէն այդ իսկ դաշնագիրը առաջ բերեց հիասթափում ու սովորական գանգատներ, Ասում էինք. Պետութիւնները անարգար եղան, չը գնահատեցին ու շը վարձատրեցին մեղ ըստ մեր արժանիքների, կրծատեցին մեր անվիճելի իրաւունքները, զրկեցին...

Մի քիչ անցած՝ նոր ու շատ մեծ հիասթափում: Հիւսիս: Ամերիկան Միացեալ Դահմանդների Սենատը մերժեց կորականօրէն ստանձնել Հայաստանի մանդատը — այն իսկ մանդատը, որի վրայ այնքան յշյուր էինք գրել մենք:

Նախագահ Ռէլիսոնի ծրագրած Հայաստանի սահմանները նոյնպէս չը բաւարարեցին մեղ, նոր գանգատների տեղ տիքն: Ասում էինք. նախագահ Ռէլիսոնը կարող էր աւելի լիիւ օգտագործել Սեւրի դաշնագիրը ու տեղի մեծ հողեր յատկացնել մեղ:

Բայց եւ այդ նեղ համարւած սահմանները — մի տեսակ կապոյտ թուցն եղաւ մեզ համար, անջօշափելի ու անհասանելի:

Թռուցերը չէին ուղում ճանաչել ոչ Ռէլիսոնի վճիռը, ոչ մեր գանգատները, ոչ իսկ Սեւրի դաշնագիրը, Փոխանակ դատարկելու հայկական հողերը, նրանք եռանդորէն զինում էին ու ամրացնում դիրքերը: իսկ դաշնակից պետութիւնները ոչ մի տրամադրութիւն չէին ցոյց տալիս՝ զէնքի ոյժով ի կարգ հրակիրելու անհնազանդ անգօրացիներին. դեռ հակառակը՝ սիրային վլիբու էին սկսել միլիականների հետ... դաշնակիցները մոռանում էին, կարծես, որ մենք մնացել ենք անբաւարարւած ու իրանց սեփական գործերն էին կարգադրում:

Ըստամի ասում եմ՝ «մենք ո, մեր ու առանց ճշտելու դերանունը»:

որովհետեւ շատ դեպքերում չեմ տարբերում կուսակցութիւնը ժողովրդական զանգւածներից. նոյն հոգեբանութիւնը, նոյն անհեռատեսութիւնը, նոյն անգիտակցութիւնը իրականութեան, քաղաքական նոյն տհատութիւնը]:

1922 թւականին սկսւեց թիւրքահայ դատի հոգելուրբը:

Հօնդոնի կօնֆիրանսում առաջի անգամ, պաշտօնապէս արտասանեց ու արձանագրեց Իոթե բառը: Սեւրի դաշնագիրը մոռացւել էր հիմնովին Այլ եւս խօսքը անկախ հայ պետութեան մասին չէր, ոչ իսկ ինքնավար նահանգների, այլ ինչ որ աղքային Իոթե-ի — մի կասկածելի օջախի ուրիշի տառ մէջ:

Բայց — ասում էին — սա վերջին զիջումն է, որ արւում է՝ խաղաղութեան սիրոյն համար՝ յամառող Անդօրային: Իոթե-ի ողահանջը պարտադիր պիտի լինի թիւրքիայի համար ու ինքը Իոթե՝ անկախ թուրք իշխանութիւնից:

Այսպէս էր տրւած հարցը Մարտ ամսին:

Տարւայ վերջը, լօզանում, գործը մի քիչ տարրեր ընթացք առաւ. Իոթե չառաջաղրւեց իրեւ՝ պահանջ, այլ ներկայացրւեց թուրքերի բարեհաճութեան իրեւ բարեկամական խորհուրդ ու խոնարհ խնդիր: Ցեղի ունեցաւ մի օպերետային դիալօգ: Թուրքերը՝ միշտ քաղաքավարի ու սիրալիլ՝ շատ ցաւեցին, որ պիտի մերժեն բարեկամական խորհուրդը ու աղաւել եւս՝ որ հարկադրւած են չը յարգելու խնդիրը: Դաշնակից մեծ պետութիւնները մի յուսահատական ժեստ արին. մենք սպառեցինք մեր բոլոր միջոցները, ասին, արինք ամէն հնարինն ու անհնարինը, այլ եւս ոչինչ չենք կարող անել խեղճ հայերի համար... ու անցան կուպօնների ինդրին:

Բայց այսուեղ հանդէս եկաւ ընկ. Զիշերինը ու խորհրդային Ռուսաստանի առուևնից մծահոդաբար առաջարկեց տեղ տալ թուրքահայութեան մնացորդներին Ղօփմում, Վրդայի ավիերին ու Սիրիբում:

Պետութիւնը վերածւեց Իոթե-ի, Իոթե-ը վերածւեց գաղութների... Սիրիբում: Սարը մուկ ծնեց — ոչ, սարը երկնեց անասելի տանջանքների մէջ, ցնցւեց հիմքերից, պատառ պատառ եղաւ, արեան հեղեղներ հոսեցրեց արգանդից ու ծնեց ոչինչ, ոչ իսկ մի մուկ:

Այս էր անցեալը:

Եթէ ուղենանք մի ընդհանուր գնահատում անել մեր կատարած շատ ծանր աշխատանիրի ու ձեռք բերած արդիւնքների՝ Հանրապետութեան անկախութիւնը հոչակելուց յետոյ, պետք է ասենք՝ որ պարծենալու շատ բան չունենք. պետք է ասենք, որ մեղ վիճակած բերը — պետութիւնն կազմելու ու պետական կեանքը ղեկավարելու գործը — մեր ոյժերից շատ վեր է եղել:

Անհելքելի ջշմարտութիւնն է, որ Հայաստանի գրութիւնը եղել է բացառիկօրէն ծանր ու մեր աշխատանիրի պայմանները՝ բացառիկօրէն անբարեյացող: Բայց անհելքելի է եւ այն — անհելքելի է գոնէ ինձ համար — որ սրա վրայ աւելացել է նաեւ մեր սեփական անկարողութիւնը, պետական գործեր վարելու անձեւնհասութիւնը:

Եթէ ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսնել, ապա ուրեմն մենք միանգամայն անողեատք կառավարիներ ենք եղել, որովհետեւ հենց այդ նախատեսները ընդունակութիւնն է, որ չենք ունեցել բնաւ:

Մենք շարունակ սիսալւած ենք եղել մեր հաշիւների մէջ ու շարունակ անսկնկալների հանդիսած, անակնկալների միայն մեղ համար, որովհետեւ չենք գիտեցել նախատեսնել:

Մեր ամենամեծ թուրլութիւնը այդ է եղել:

Ապա չենք ունեցել որոշ ու յստակ գիտակցութիւն մեր անելիքի մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տեւողական, հետեւողական միստեմ, գործել ենք կարծես յանկարծակի ու պատահական ներշնչումների տակ, տատանել ենք, պատից-պատ ընկել, կէսկուրօրէն շօշափելով ոտներիս տակի հողը:

Չենք ճանաչել ու յաճախ գերագնահատել ենք մեր կարողու-

թեան չափը, չենք հասկացել դժարութիւնների մեծութիւնը, արհամարհել ենք հակառակ ոյժերը և թեթևամուռթիւն աստիճանի անփոյթ ենք եղել մեզ սպառնացող վտանգների հանգեար:

Կարուկ ենք եղել այնտեղ, ուր պէտք էր ծայրայել զդուշութիւն, ու անվճռական այնտեղ, ուր պէտք է կտրուկ լինենք:

Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մոռայնութիւն ենք մոցրել պետական կետնիքի մէջ:

Պետական մարդիկ չենք մենք:

Պակաս անբարեյաշող պայմաններում թերեւս կարողանայինք՝ սխալսելով ու քննիահարւելով հանդերձ՝ գտնել վերջապէս ճամբան, ունենալ մի տեղ ամրացնել ու կամաց-կամոց շնել, կարգաւորել պետական շենքը: Բայց այն սոսկալի պայմանների մէջ՝ մենք չենք, որ պիտի կարողանայիք — առանց որ եւ է յենարանի, միայն մեր ոյժերին թողած — կատարել այդ հերկութեան աշխատանքը:

Թող ոչք ըստ վիրաւորսի այս խօսքերից, անբարեացակամ մարդու շարախնդութիւն չէ սա, այլ մի պարզ ինքնագնահատում: Չե՞ որ անհարողների առաջի շարքում՝ ձեր կողքին ու ձեղ հետ միասին՝ եղել եմ եւ ես, ես ձեր գործակիցն իմ եղել, ձեղ հետ ու ձեղ շափ ստատասնատու մեր պարտութեան:

Պատասխանատու, ասի... Քաջութիւն չունեմ աւելացնելու, որ մենք ոչ միշտ ու ոչ հարկաւոր չափով գիտակցել ենք, թէ ինչ մեծ պատասխանատութիւն ենք վերցրել մեզ վրայ. աղաս նաեւ, թէ ոչ միշտ ու ոչ հարկաւոր չափով բարեխիցն ենք եղել մեր պարտականութիւնների հանդեպ... Քաջութիւն չունեմ, որովհետեւ վախենում եմ թէ անարդար լինեմ: Բայց — ով գիտէ — գույէ ինձանից աւելի անաշառ մի մարդ այդ էլ ասի ու անիրաւացի ըստինի...

* * *

Ի՞նչ է ներկան:

Արտքսի ու Սեւանի միջեւ ունենք այսօք մի փոքրիկ Հանրապետութիւն, անունով անկախ, իսկ իրօք՝ վերհաստատող Ռուսական կայսրութեան ինքնավար ծայրագաւառներից մէկը:

Թիւրքահայաստան չկայ — ոչ իրբեւ պետութիւն, ոչ իրբեւ

հոգեւութիւն դիւանագիտութեան ինդիր. ինդիրը փակւած է, սպաննաւծ ու թաղւած լողանում:

Աւելին՝ թիւրքահայաստանում հայ չկայ այլեւս ու չկայ ոչ մի հաւանութիւն, թէ լինելու է այսուհետեւ. թուրքերը պինդ փակել են դռները ու ասպարիզով չկայ, չի երեւում ոչ մի ոյժ, որ հարկադրեր բանալու:

Մօտ մի միջինն հայ գտնուում է Հայաստանի Հանրապետութեան սահմանների ներսը. միջինից աւելի մնում է գուրաը (Արաստան, Աղբարէջան, Հիւսիսային Կովկաս, Պարսկաստան, Վիրիա, Պոլիս, Բալքաններ ու առո՞ տշիսարչի ամեն կողմը):

Դրսեցինների մի շնչին մնուը միայն կարող է ապաստանարան գտնել Հայաստանի Հանրապետութեան մէջ: Անկարս ժամանակաւոր ռաժարութիւններից, Հանրապետութեան խիստ ներդ ստհմանները թոյլ շն տալիս զանգւածային ներդաղմներ (յատկապէս՝ հայկական վիլայէթներից ազատուած գիւղացիութեան ներդաղմէլ): Սիւս կողմից, պակաս արգելք չի ներկայացնում նաև Անդրկովկասից զուրս գտնուող գաղութային հատածների սօցիալական գեւմքը — մանր քաղքինիութիւն, որ տնտեսապէս կապուած է առեւտրական կենցրանների հետ ու չի կարող՝ սահմանափակ թիւից աւելի՝ ապրուստ գտնել Հայաստանի պէս ազգատ ու աւել զիւղացիական երկուում:

Անդհանուր առմամբ՝ դրսեցի հայերը պետական տարր չեն այսօրս այս Հայաստանի համար:

Եւ որքան երկար տեսի ներկայ դրութիւնը, անքան աւելի պիտի խորթանան ու օտարանան, անողեափ գառնան: Իրբեւ ազգային տարր, թերեւս մի առ ժամանակ ներկայացնեն որոշ արժեք (եւ սա մեծապէս կախուած կը լինի նրանից, թէ որքան ընդունակ կը լինենք կաղմակերպւալընը՝ աղջային կազն ու դիտակցութիւնը կենդանի պահելու համար գաղութների մէջ). բայց իրբեւ պետական տարր մնում են միայն Հայաստանի հայութիւնը եւ այն խոշոր հատածները — զլիաւորապէս զիւղացիութիւնը — որ գտնուում են Հանրապետութեան զրացի Արաստանում ու Աղբարէջանում Արանց վրայ պիտի յենքի ու սրանց համար հաստատի հայ պետութիւնը:

Վաղութային հայութիւնը — լաւագոյն գետքում — մնալու է իրբեւ օժանդակող ոյժ (այն էլ շատ համեստ չափերով) ու մի տեսակ պահեստ՝ անորոշ աղաքայի համար:

Այսօր հայ քաղաքական մողքի անմիջական հոգառարութեան առարկան պիտի լինի գոյութիւն ունեցող Հանրապետութիւնը, նրա մէջ ու նրա շուրջ ապրող հայ ժողովուրդը:

Ըստգծում եմ ուժգնորեն այս նախադասութիւնը ու յանձնում ձեր առանձին ուշադրութեան, որովհետեւ սա պիտի լինի մեր ապագայ անելիքի ելակետը:

* * *

Ի՞նչ դիմք պիտի բռնի մեր կուսակցութիւնը այդ Հանրապետութեան, նրա ընթիմ ու կառավարութեան հանդեպ:

Հանրապետութիւնը անկախ չէ, նա կազմում է դաշնակցական Անդրկովկասի ու՝ ապա՝ դաշնակցական Ուռուսաստանի մի մասը. փաստորեն՝ մի բնվագար նահանգ է Հայաստան, Սոսկուայի հսկողութեան ու Հրամանատարութեան տակ:

Այս գրութիւնը կարող է արդեօք բաւարարել մեր կուսակցութիւնը, սա է արդեօք մեր քաղաքական իդեալը:

Ի հարկե, ոչ:

Աերեւում յիշատակեցի արդեն, որ 1918 թ. գարնան Հ. Յ. Դաշնակցութիւնը ականայ ձայնակցեց Ուռուսաստանից անջատուելու առաջարկին. մենք հակառակ եինք բաժանման, վախենում եինք բաժանման մասը, ուղում եինք կապւած մնայ Ուռուսաստանին: Բայց դա չի նշանակում, թէ ձգտում չունեինք անկախութեան, թէ վասսալական դրութիւնը՝ մեր իդեալն էր:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իս խորին համոզումնվ, միշտ եղել է ու միշտ մնացել՝ դիտակցօրեն թէ անդիտակցօրեն՝ հայ քաղաքական ազգատագրաւման մարտիկը, իսկ այդ աղատագրաւման վերջի կայանը՝ անկախ պետութիւնն է: Մեր կուսակցութեան էութիւնը, դյուստեան իմաստը, պատմական կոչումը, ոյժն ու արժեքը՝ այդ է եղել ու միայն այդ: Չի եղել ու չկայ ոչ մի իսկական դաշնակցական՝ ինչ հովերով ել տարւած լինի նա, ինչ ֆրազէօծուիս ել ունենայ բերանում՝ որ ներշնչած չը լինի անկախութեան գաղափարով, աւելի ճիշտը՝ լեցւած չը լինի անկախութեան բնագրով: Խւ այդ իմաստով մեր կուսակցութեան սահմանները շատ աւելի ընդարձակ են, կուսակցական-

ների թիւը շատ աւելի մեծ է, քան արձանագրւած է կօմիտեական տետրակների մէջ:

Այս միտքը ես երկարօրէն ղարգացրել եմ անցեալ գարնան և Հակատամարտի մէջ և այստեղ իրաւունք շեմ համարում կրկնելու: Ուղում եմ ասել միայն, որ Հայաստանի ներկայ քաղաքական վիճակը — իդեալ չէ ու չի կարող լինել և Յ. Դաշնակցութեան համար:

Անշուշտ, մենք ամենաշերմ կողմնակից ենք եղել (ու այսօր ել ենք) ֆեդերացիայի եւ գիտենք, որ Հայաստանի պէս մի փոքրիկ պետութիւն այլ կերպ չի կարող ասպահովել իր գոյութիւնը: Բայց մենք ուղում ենք այսպիսի ֆեդերացիա, որի մէջ դաշնակցող պետութիւնները մտնում են աղատ կամքով ու հաւասար իրաւունքներով: Ուռուսաստանի ներկայ ֆեդերիացիան այդպէս չի կազմնած:

Հայաստանի Հանրապետութիւնը խորհրդային է: Խորհրդային իրաւակարգը տեսականօրէն ենթադրում է՝ մինչեւ դասակարգերի անդառնալի վերացումը՝ պրոլետարիատի դասակարգային դիկտատուրա: Խսկ իրականացիք՝ այսօրւայ Հայաստանի իշխանութիւնը կօմիտեական կուսակցութեան դիկտատուրա է:

Կարող է բաւարարել մեղ այդ բնոյմի մի իշխանութիւն:

Ի հարկե, ոչ:

Ճիշտ է, որ մենք ինքններս մի անյաջող փորձ ենք արել՝ մէր սեփական դիկտատուրան հասաւտելու: Բայց դիկտատուրան (ոչ կուսակցականը, ոչ դասակարգայինը) դաւանակը չէ մեղ համար: Անվարժ պետական կեանքի ու վարչական աշխատանքի, թունաւորուած իշխանութիւն թղնով, մենք չե կարողացներել գայթակղութեան ու սայթագրեցներել: Բայց արդեն զգացել ենք մեր սինալը ու նահանջելու ճանապարհներ ենք որոնում: Եւ եթէ ուշացնենք, սիստի տապալը ենք՝ անխուսափելիորեն՝ Որովհետեւ ու միայն մեր կուսակցուական դաւանակը, այլ եւ աղքային կազմը անսպաստ է, հակառակ է որեւէ դիկտատուրայի: Հայաստանում չկայ ոչ մի գաս կամ շերտ, ոչ մի կուսակցութիւն: Կամ խմբակցութիւն, որ կարողանայ՝ իր ցժեխտով ու իր վըայ յենած՝ դիկտատուրա հաստատել: Մեր երկրում կայուն դիկտատուրա կարող է իրականացնել միմիայն դրսի, օտար ոյժը, բայց ոչ երբեք՝ տեղականը: Մեր երկիրը կարծես յատկապէս ստեղծւած է դեմո-

կրատական իրաւակարգի համար եւ պահառում է մի բան միայն՝ քաղաքական դաստիարակութիւն ու պետական կեանքի վարժութիւնն Այդ մեծ պահասը գծարացնում է խսկական ռամկալար կարդեր հաստատելու, բայց չի կարող յինարան դառնալ ներքին դիկտատուրայի համար:

Խորհրդային Դաշնակցութեան, ուրեմն եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ սօցիալ-տնտեսական կեանքը վերաշնուռում է (կամ վորձ է արւում վերաշննչու) կօմմունիստական սկզբունքներով:

Համարում ենք մենք հարկաւոր ու օդտակար այդպիսի մի քաղաքականութիւն Հայաստանի համար:

Ոչ, չենք համարում:

Եւ սա միանդ ամայն անկախ նկանից, թէ մեր կուսակցութեան դաւանած սօցիալիզմը ո՞րքան գիտակցւած ու մարտած է, ո՞րքան համապատասխանում է կուսակցական իրական կաղմին ու հաւաքական մոայնութեանը: Իս, որ առանց տատանելու գրում եմ այդ կտրուկ սուուլ — իմ աշխարհահայեցողութիւնով ես շատոնցւայ ու անուղղելի կօմմունիստ եմ: բայց գիտեմ, որ ոչ միայն կօմմունիստական, այլ եւ պարզ սօցիալիստական կարգերը անհանդուրժելի են այսօրւայ Հայաստանի համար:

Հայաստան չի հասունացած սօցիալիզմի համար ու ցունի օրեեկոտիւտեալների այն մինիմումը, որ կարողանար արդարացնել վործը: Ամեն մի ճիգ այդ ուղղութեամբ կանխօրէն դատապարտւած է անյաջողութեան ու յանցանք է՝ յատկապէս հայ աշխատաւորութեան հանդէպ:

Այս խնդրի մասին ել ընդարձակօրէն դրել եմ անցեալ տարի նոյն Շակատամարտի, մէջ: բաւականանում եմ այս մի քանի կարճ տողերով միայն, վտահ լինելով որ այս կետում տարածայնութիւն չկայ մեր մէջ:

* * *

Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանի ոչ քաղաքական վիճակը, ոչ վարչածեւը, ոչ էլ ներքին սօցիալ-տնտեսական քաղաքականութիւնը չեն կարող բաւարարել մոզ. մենք ուրիշ բան ենք ուղում, քան այսօրւայ Հանրապետութիւնը:

Այսուն ինչ զիրք պիտի բռնենք այդ Հանրապետութեան, նրա բեժիմի ու կառավարութեան հանդէպ:

Պարզ ու կարծ պատասխանն է. Պիտի պայքարենք:

Բայց կարծ ու պարզ պատասխանները յաճախ սիալ են լինում, երբ հաղը վերաբերում է բարդ երեսովների ու հնձուած դրութիւնների:

Քաղաքական կուսակցութիւնները դիտական ճեմարաններ չեն, ուր հետազոտութեան են առնուում ու տեսականորեն լուծուում վերացական խնդրները. քաղաքական կուսակցութիւնները կոչում ունեն ոչ թէ տեսութիւններ ղարգացնելու (սա օժանդակող աշխատանք է միայն), այլ զործելու եւ դործելու տևեալ կօնկրետ պայմանների մէջ:

Երբ հարցը այս հողի վրայ դնենք — ու պէտք է որ դնենք, այլապէս շարուշար սիալը կը լինենք — պատասխանը արդեն ուրիշ կը լինի:

Պայքարը ենթադրում է մի որոշ նպատակ եւ այդ նպատակին համեմու համար՝ մատչելի ու արդիւնաւետ միջոցներ:

Ո՞րոնք են մեր միջոցները եւ ինչ արդիւնք կարող է տալ նրանց դործադրութիւնը:

Ամէ խորհրդային կարգերը ճանաչենք քաղաքացիական ազատութիւններ, մենք՝ իրեւ օպօղիցիա՝ հանդէս կը գոյինք մասուլի ու հրապարակային ժողովների մէջ, կը քննուագտեինք Խորհուրդների սիալ քաղաքականութիւնը, հասարակական կործիք կը պատրաստեինք, մեր շուրջը համակիրներ կը հաւաքեինք, կը կազմակերպեինք դժգոհ ու ընդդիմագիր տաղբերը:

Ամէ խորհրդային կարգերը ճանաչեն նաև քաղաքական իրաւունքների հաւատարութիւնն, մենք կը մասնակցէնք ընտրողական պայքարներին, կ'աշխատեինք տեղեր գրաւել Խորհուրդներում ու մեր ցանկութ ուղղութիւնները մոցնել սրբազնութեան ու վարչածեւի մէջ:

Բայց Խորհրդային իշխանութիւնը չի ուղարկ ճանաչել ոչ քաղաքացիական աղատութիւններ, ոչ էլ քաղաքական իրաւունքների հաւատարութիւն — կուսակցական (ասենք՝ գտասկարդային) դիկտատուրա է նաև Մինք կարող են շատ ցաւել այս առմիիւ. դանդատւել, բողոքել, զայրանալ... բայց զրութիւնը չի փոխի, փասով կը մնայ փաստ. իրեւ օրինական օպօղիցիա՝ մենք տեղ չունենք Հայաստանում:

Ասում եմ՝ Հայաստանում, որովհետեւ չեմ ըմբռնում օպօղեցիայի արժէքը Հայաստանից դուրս:

Ի հարկէ, գաղութներում մենք կարող ենք իսուել ու գրել, որքան կամնանք ու ինչ կամնանք, դրա համար հարկաւոր է միայն թուղթ ու տպարան, այսինքն՝ մի քիչ դրամ եւ ուրիշ ովնչ։ Բայց Խորհը դային Հայաստանի համար քանի գրօշի արժէքը ունի ոռուանահայ կամ եղիստահայ գաղութների հասարակական կարծիքը (ենթադրելով իսկ, թէ այդպիսի կարծիք իրք կը յաջողի ստեղծել)։

Պոցեց գաղտնի մոցնել մեր տպագրական խոսքը Հայաստան...

Անցեալներում, ցարական յեժիմի տակ, մենք մոցնում ենք երկիր և Դրօշակը. եւ ուրիշ հրատարակութիւններ. իսկ այսօր — եթէ չեմ սիալում — սօցիալիստ-յեղափոխականները շարունակում են մոցնել Ռուսաստան իրանց արտասահմաննեան գրականութիւնը։ Չը գիտեմ, ինչ յոյսեր ունեն սօցիալիստ-յեղափոխականները եւ որքան յաջողեցնում են գաղտնի պրոպագանդը։ Բայց, հաշի առնելով մեր իրականութիւնն ու մեր կարողութիւնը, հարց եմ տալիս. ինչ նշանակութիւն պիտի ունենան մեր թերթիկները, որ գաղտապով պիտի կարդայ մի քանի հարիւր մարդ՝ հանդեպ այն հսկայ գրականութեան, որով բօշշեկները հեղեղում են երկիրը։ Աշխանում եմ, որ մեր փորձի միակ հետեւանքը լինի այդ մի քանի հարիւր մարդու կեանքի կամ աղատութեան վտանգումը եւ ուրիշ ովնչ։

Իսկ որ ամենից կարեւորն է՝ գաղտնի պրոպագանդի համար հարկաւոր են շատ որոշ, կորուկ, հեշտ ըմբռնելի ու զանգվածներին ոգեսրելու ընդունակ բանաձեւեր — մի բան, որ մենք չունենք, չենք կարող ունենալ։

Այս առթիւ՝ մի քիչ յետոյ։

Թերեւս կարելի լինի համաձայնութեան գալ բօշեւիկների հետ Տարօրինակ է թւում, բայց փաստ է որ այդ միաքը — կամ այդ միամնութիւնը — ունեցել ենք անցեալում ու փորձ ենք արել կուսակցօրէն դաշնակցել բօշեւիկների հետ։ Տարօրինակ է թւում, որով հետեւ դա ասել է պարզապէս չե հասկանալ բօշեւիկմի եռմիւնը։ Բօշեւիկմը միահեծան է, ինքնակալ. ով իր մէջը չէ (կամ գաղաքականորէն բացարձակապէս շեղով չէ), իր դէմ է արդէն։ Ապա մի մոռանաք,

որ բօշեւիկների աչքում մենք մանր-քաղքենիական կուսակցութիւն ենք (մի բան որ, իմ կարծիքով, ոչ արատ է, ոչ ել հեռու ճշմարտութիւնից, եթէ հաշւի առնելու լինենք ոչ թէ մեր ծրագիրն ու անհատ շեկավարների աշխարհահայեցողութիւնը, այլ կուսակցութեան իրական կաղմն ու նրա հաւաքական մտայնութիւնը)։ Եւ եթէ բօշեւիկների կաղմն անհանդուրժելի են մարքսիստ-մենշեւիկները ու սօցիալիստ-յեղափոխականները, բանական է որ ել աւելի անհանդուրժելի լինի Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Յանուն ինչի՞ ու ինչ նպատակներով պիտի դաշնակցեն մեղ հետ բօշեւիկները։

Մինք սիրում ենք հաւատացնել և մել, և ուրիշներին, թէ առանց մեր դործակցութեան բօշեւիկները չը պիտի կարողանան կառավարել Հայաստան։ Ինչի՞ վրայ ենք հիմնում այս սպառնալիքը եւ ինչո՞ւ բօշեւիկները պիտի հաւատան, թէ իրօք մենք այդքան պետք ենք իրանց Ահա երկու տարի է, որ մենք աքսորւած ենք Հայաստանից կամ իսեղդւած Հայաստանի մէջ։ Ի՞նչ գժարութիւնների են հանդիպել բօշեւիկները, որ դոյզմիւն չեին ունենայ կամ վերացւած կը լինեին, եթէ մենք իրանց հետ լինեինք։ Ինձ յայտնի չեն այդ կարգի գժարութիւններ. տրամադիր եմ կարծելու, թէ իսկ ել չեն եղել։

Կասկած չկայ, որ իրեւ սոսկ քաղաքացիներ, մենք ներկայացնում ենք որոշ արժէք. բայց որ գաղաքական կուսակցութիւնը կամ որ կառավարութիւնը շեղեւ է իր քաղաքական գծից ու դաշնակցել հակառակորդի հետ՝ մի քանի հարիւր քաղաքացիներ շահելու համար...

Յամենայն դեպս — իրաւացի թէ անիրաւացի, իսելքի շատութիւնից թէ իսելքի պակասութիւնից — փաստն այն է, որ բօշեւիկները չեն ուղարկում մեր գործակցութիւնը։

Գործեր արել ենք արդէն ու մերժում ենք ստացել։ Նորից փորձել՝ ոչ միայն պարագ ու ապարդիւն, այլ եւ անվայել բան կը լիներ, դարապ ու ապարդիւն, որովհետեւ եթէ մէկ կամ երկու տարի առաջ պետք չենք եղել բօշեւիկներին, այսօր էլ աւելի պետք չենք. անվայել, որովհետեւ կայ արժանապատռութեան մի սահման, որից չե կարող անցնել կուսակցութիւնը եւ մուրացիկի գեր ստանձնել։

Մնում է իլլեգալ, դաշտնի, դաւադրական կամ — առելի լոյն շափերով — յեղափոխական աշխատանք:

ՀԵ՞ որ մենք հալածւած էինք նաեւ Յարական ու Այսպահանական կառուայրութիւններից! Այժմ չենք կարող անել խորհրդային Հայաստանում նոյնը, ինչ անում էինք տարիներ շարունակ Տաճկահայաստանում: Կարող ենք, ի հարկեւ:

Կարող ենք մի բուն դնել պարսկական Ղարադաշում՝ (ինչպէս մի ժամանակ բուն էինք զրել Սալմաստի մէջ) ու այստեղից զենք ու մարդանցկացնել Արաքսի միւս ափը: Կարող ենք դաշտնի կապեր հաստատել ու լինւած խմբեր պահել Ախանիրի համ դարադադեալի լեռներում: Ինչպէս պահում էինք Սասունի լեռներում կամ՝ Շատափի ձորերում: Կարող ենք՝ դժարմատշելի վայրերում՝ ապստամելեցնել մի քանի գիւղ, դուրս քշել կամ կոտորել այնտեղի հօմեննիստներին: Ապա կարող ենք աղմկալի ցոյցեր անել Խոհեւանի իսկ մէջ — օրինակ՝ գրաւել մի քանի ժամով որ եւ է պիտուկան հիմնարկութիւն, ինչպէս մի ժամանակ դրաւեցինք Օսմաննեան լանկը. Կարող ենք պայմենեցնել այս կամ այն շենքը. Կարող ենք կաղմակերպել ու կատարել անհատական սովանութիւններ, կոտորել մի քանի բօշեւիկ, ինչպէս կոտորել ենք սուլթանական ու ցարական պաշտօնեաններին: Կարող ենք սումի պայմենեցնել Մեասնիկեանի կամ Լուկաշինի — կամ չգիտեմ ում — սուների տակ, ինչպէս նըլդիդ-քէօչքում պայմենեցրել ենք սուլթան Արդուլ Համբդի ուների տակ...

Այդ բոլորը կարող ենք անել: — Կարծում եմ թէ կարող ենք անել:

Հարց է ծաղում միայն, թէ ինչ յշխերով կամ ինչ նպատակով անենք:

Երբ ցոյցեր էինք անում Թիւրքիայում, կարծում էինք թէ այդ պիտով կը հրաւիրենք մեր վրայ մեծ պետութիւնների բարեցակամ ուշադրութիւնը ու կը հարկադրենք միջամտելու մեր օգտին: Այժմ մենք դիտենք այդ միջամտութիւն խկական արժեքը ու թւում է ինձ, թէ նոր փորձեր անելու: Կարիք չունենք այլեւս: Խիմք բարեխնամ եւրոպան շրջեց կամ չկարողացաւ օգնել մեղ Թիւրքիայում, դժար չէ հասկանալ: Որ էլ աւելի չը պիտի ուղենայ կամ չը ոլիտի կարողանայ օգնել Ռուսաստանում:

Ահաբեկման սիստեմը՝ իբրեւ անհատներին զսպելու միջոց՝ թիրեւս ուներ որոշ նշանակութիւն, երբ գործ ունենալով քուրդ գերերեցների կամ՝ ցարական շինովների հետ: Բայց պիտի ընդունենք, որ բօշեւիկները մի քիչ տարբեր խմբի: մարդիկ են: Այնք վիխագարձ ահաբեկման խնդիր դրւելու վիճի, բօշեւիկները մեղանից ետ չեն մնայ, գեռ միերկու քայլ էլ առաջ կ'իրթան: այնտեղ, ուր մենք փորձ կ'անենք ահաբեկել անհատներ, նրանք կ'ահաբեկեն ամրող զանգվածներ:

Կարող ենք խոռվութիւններին այնպիսի ծաւալ տալ, որ վելածւեն քաղաքացիուկան պատերազմի:

Շատ անհաւանական եւ Բայց — վերջ ի վերջը — սա ել անկարելի բան չեւ Այնք լըջորեն մտադրեւենք, շատ աշխատենք ու միջցների առաջ կանգ շառնենք: — թիրեւս կարողանանք:

Բայց ինչի համար:

Կարող ենք յուսալ, թէ վենքով դուրս կը քշենք Հայաստանից բօշեւիկներին, երբ նրանք կանգուն են Ռուսաստանում եւ երբ մենք մեր թիկունքում ունենք բօշեւիկների դաշնակից միլինական թիւրքիան:

Չեմ կարծում, թէ այսօր գտնի մեր մէջ մէկը, որ այդքան միամիտ մտածողութիւն ունենայ Քաղաքացիական կոբեր — եթէ ծագի էլ — պիտի վերջանայ մեր պարտութիւնով: Բօշեւիզմը հայկական բեժիմ չէ եւ Հայաստանում չէ, որ պիտի տապալիքի (եթէ միայն տապալելու է): Հայկական բօշեւիզմը — շարունակութիւնն է ու մի փոքրիկ մասը ռուսական բօշեւիզմի: Քանի Մոսկվայում ծածանում է կարմիր դրօշակը, նա ծածանելու է անիուսափելիուն նաեւ Նրեւանում: 1918 թւականին մենք կարող ենք, իրաւունք ունենք այլ կերպ մոածելու: այսօր այդ իրաւունքը չընենք:

Բայց չէ որ բօշեւիզմը ունի անհաշտ հակառակորդներ նաեւ Ռուսաստանում ու Խորհրդայուն ուրիշ ծայրագաւառներում՝ հենց մեր հարեւան Արաստանում ու Ազգբէյլանում: Բնական չեր լինի, որ մենք դաշնակցենք այս դժգոհների հետ ու սրանց հետ միասին, լնդհանուր զյժերուի, փորձենք խորտակել կօմմունիստների դիկտատուրան:

Շատ բնական կը լինեմի Բայց հենց այդ է, որ չպիտի անենք:

Հայ ժողովուրդը շատ է տուժած, շատ է յոդնած ու ուժասպառ: Իրաւունք չընենք նոր փորձանքների մէջ ձգելու նրան, նոր պատահարների ենթարկելու, նոր զօհարելութիւններ պահանջելու: Նշանակած է անհանդանութիւնը:

բաւական է, կարծեմ։ Հակաբօշեւիկեան Ռուսաստանը թող առանց մեզ վարի իր պայքարը Խորհուրդների գէմ։ Մենք չկանք Հայ ժողովուրդը կատարեալ իրաւունք ունի մի րոպէ շռնչ քաշելու ու իր վերքը ըստմէլու մասին մտածելու։ Խկ եթէ մէկը չուզեց ճանաչել մեր այդ իրաւունքը, չը հաւանեց բռնուն դիբքին — թող չը հաւանի։

Մի քայլ ել առաջ գնամ, որպէս զի միտքս լիիւ պարզած լինեմ։ Ես ինձ հարց եմ տալիս. Նթէ — ինչ որ հրաշքով — ինձանից ու միայն ինձանից կախ ած լինէր բօշեւիկների գոյութիւնը Հայաստանում, եթէ բաւական լինէր իմ մի մատի շարժումը, որպէս զի բօշեւիկները մի ակնմարմում անհետանային մեր երկրից — կ'անէի արդեզք այդ շարժումը. Ու պատասխանում եմ առանց տատանւելու. ոչ, չէի անի։ Ոչ միայն չէի անի, այլ ևս ձեռու կը կտրէի, որպէս զի երաղիս մէշն անգամ՝ պատահարար կամ սիսալմամբ՝ չանեմ այդ շատ վտանգաւոր շարժումը։

Բօշեւիկները՝ քաղաքական ներկայ պայմանների մէջ՝ պէտք են Հայաստանին եւ չկայ մի ուրիշ ոյժ, որ կարողանար փոխարինել նրանց — ահա ծշմարտութիւնը։

Մեր պետական կեանքի առաջի օրերից իսկ մենք լաւ հասկանում եինք, որ Հայաստանի պէս մի փորբիկ, աղքատ, աւերւած ու աշխարհից կտրած պետութիւն, չի կարող իրօք անկախ ու ինքնակալ լինել, որ հարկաւոր է մինեցուկ, մի զրսի ոյժ, որի վրայ նա կարողանայ յինւել — գոնէ իր գոյութեան առաջն շրջանում, մինչեւ կազմակերպւելն ու օժերը հաւաքել։

Այդպիսի մինեցուկ մենք որոնեցինք հեռաւոր Հմերիկայում, ապա ծերոպայում, Արդիւնքը գիտէր, Նթէ երկու-երեք տարի առաջ դեռ կարող եինք որոշ յօյսեր ունենալ, այսօր այդ կարողի յօյսեր չկան այլ եւս ու յամառելը՝ յանցաւոր միամտութիւն կը լինէր մեր կողմից։

Չը գիտեմ, ինչ անակնկալների առաջ է դնելու մեջ հեռաւոր ու անյայտ ապագան. բայց ներկան ու այսօրւանից տեսանելի ապագան՝ պարզ է միանգամայն։ Մեղ համար երկու իրական ոյժ կայ այսօր, որ հաշվի պիտի առնեն. Ռուսաստանն ու Թիւրքիան երերի բերմամբ մեր երկիրը այսօր ուսւական օրբիտի մէջ է ու՝ խոշոր շափերով՝ ապահովւած Թիւրքիայից։ Աթէ վերացքի ռուսական հեգեմո-

նիան, նրան անխուսափելուոքն պիտի փոխարինի թուրք-Թաթարական հեգեմոնիան։

Ռուսաստանը կամ Թիւրքիան, բօշեւիկները կամ Թիւրքիականները — ուրիշ ընտրութիւն չունենք անելու։

Եւ երբ կանդանած ենք այդպիսի ալսերնատիւի առջեւ, տատանումներ՝ թւում է ինձ՝ տեղի չը պիտի ունենան. ի հարկէ, Ռուսաստանը եւ ոչ Թիւրքիան, ի հարկէ, բօշեւիկները եւ ոչ Թիւրքիականները։

Աթէ ընտրութիւնը այդքան սահմանափակ չը լինէր, մենք շատ առարկութիւններ կ'ունենայինք անելու Ռուսաստանի գէմ առհասարակ ու բօշեւիկներն ուստիմի գէմ յատկապէս։ Բայց մեր երկրի դժբաղդ աշխարհաղբական դիրքը կապում է մեր ձեռներն ու ոտները։

Հայաստան պէտք ունի բօշեւիկներին, որովհետեւ պէտք ունի Ռուսաստանին։

Չը գիտեմ, ինչ է լինելու վաղը (Կարծում եմ, թէ շատ ել չը պիտի տարբերուի այսօրւանից). բայց այսօր Ռուսաստանի տէրը՝ բօշեւիկներն են։ Այսօր Ռուսաստանի բարեացւկամութիւնն ու պաշտպանութիւնը ունենալու համար, Համար, Հայաստան ինքը Խորհրդային պիտի լինի։ Ուրիշ ելք չկոյ — ես գոնէ չեմ տեսնում։

Եւ այս մորով է ահա, որ ասի վերեւում, թէ մենք լօզունգներ չունենք՝ Հայաստանում հակաբօշեւիկներն գաղտնի պրօպագանդ անելու համար։

Կոյն հարցը, մի քիչ տարբեր ձեւով, զնեմ՝ անցեալի վերաբերմամբ։ Բայց կարող է թւել շատ անսպասելի դաշնակցականի բերանում. մենք վաղուց արդեն տւել ենք մեր պատասխանը եւ բօշեւիկների օգատն չի եղել, այն բայց մի անգամ ել մուած ենք ու աշխատենք չը տարւել կուսակցական նեղարկութիւնով։

Արկնել չեմ ուղում, թէ որ աստիճանի անհամապատասխան է Խորհրդային բնժիշկ Հայաստանի իրական պահանջներին. այս խնդիրը ինձ համար չի վերցնում՝ ոչ մի վեճ։ Ապա գիտեմ ու շատ լաւ յիշում եմ, թէ ինչներ արին բօշեւիկները Հայաստանում — խօսք այն երկու ու կէս ամսւայ մասին է

(Դեկտ. 1920 թ. — Փետրվար 1921 թ.), երբ ես եղել եմ՝ Հայաստանում: Վիտեմ ու յիշում եմ, թէ որքան մարդիկ են տուժել և թէ տուժողների առաջին շալքերում եղել ենք մենք, գաշնչականներու Հենց ի՞ս անհատապէս եւ ձեզանից շատերը — ենթարկւած ենք եղել ամենածանր հալածակների, տուժել ենք շարաշար:

Վկատեմ անցողակի, որ պէտք չէ մոռանանք այս խիստ կարեւոր հանգամները ու զգոյշ պիտի լինենք մեր եղբակացութիւնների մէջ. իբրև տուժող կողմ. մենք յնականորէն տրամադրւած ենք մրայն վատը տեսնելու եւ այդ վատը շափաղանցնելու...

Երբ ես մտաւերում եմ այն դրութիւնը, որի մէջ եինք 1920 թ. Կոյսիմիերին, ու աղա հարց եմ տալիս ինձ. աւելի լաւ կը լիներ արդեօք, եթէ բօշի բօշի կողմէ այն ժամանակ չը մտնէին Հայաստան ու թողնէին երկիրը իր բազդին, մեր իշխանութեան տակ — պատասխանս բացասական է լինում. ոչ, աւելի լաւ չէր լինի, աւելի վատ կը լիներ:

Արդէն այն ժամանակ էլ հասկանում եինք մեր դրութեան անելանելիութիւնը եւ սա եր պատճառը, որ Հայաստանի դռները լոյն բաց արինք բօշի կողմէ առջեւ:

Վերեւում ասի, որ մեր յօյսերը շարդարացան. ոչ քաղաքական, ոչ էլ տնտեսական օգնութիւն շտացանք Ռուսաստանից (խօսք դարձեալ առաջին շրջանի մասին է): Օրինակ՝ Թիւրքիայի դէմ բօշի կողմէ ապաշտպանեցին Հայաստանը ու իրանց ստորադրութիւնով հաստատեցին Ալեքսանդրոպոլի դաշնագիրը, որ մենք ստիպւած եինք կնքել ընազնին սպառնալիքի տակ: Այս այսպէս է: Բայց կը յարդեին արդեօք թուրքերը նոյն դաշնագիրը ու զանազան պատրւակների տակ, որ դժար չէր յօրինել՝ նոր ոտնձգութիւններ չէին անի արդեօք, եթէ բօշի կողմէ եկած չը լինեին ու մենք մենակ մնացած լինենք իրանց դէմ:

Ի՞նչ պիտի անենք մենք այդպիսի ոտնձգութիւնների դէպրում — մենք, որ պարուած ու ուժապատ եինք, կողցրել ենք ամեն հուղարկութիւն թէ երկրից դուրս եւ թէ երկրի ները:

1920 թ. աշնան վերջերը մենք՝ իրրեւ կառավարութիւն ու իրրեւ կուսակցութիւն՝ սպառել եինք մեր բոլոր որժերը. լինկել եինք անելի մէջ: Եւ եթէ բօշի կողմէ կուշանայն, մենք պիտի կանչէնք իրանց, որովհետեւ ինքներս անզօր եինք արդէն. իսկ երկրում շկար մի այլ ոյժ, որ այն օրերին կարողանար փոխարինել մել:

Տեսէք հետեւանքները:

Նրիու տարի ու կես կառավարեցինք մենք երկիրը. մօտ երկու ու կես տարի է, որ կառավարում են բօշեւիկները:

Մենք ունեցանք պատերազմներ՝ Արաստանի, Ազգայիշանի ու Թիւրքիայի դէմ: Բօշեւիկները պատերազմ շունեցան: Մենք ունեցանք անընդհատ ու բաղմանթիւն կուսներ՝ Աղբարա, Զօդ, Զանգի-Բազար, Անդր-Բազար, Միլի ձորերը, Շարուր, Նախիջեւան, Զանգեղուր. բօշեւիկները ներբին կուսներ չունեցան, բացի փետրւարեան ապստամբւաթեան հետ կից կուսները: Մենք շարունակ պահում եինք երկիրը զենքի տակ, անընդհատ կուսների մէջ, զբաղեցրիլ եինք բոլոր աշխատաւոր ձեռները պատերազմի դաշտերում, մինչդեռ ամենամեծ կարիք ունենք շնչարար աշխատանքների: բօշեւիկները աղատեցինք մողովուրդը այդ աշխատից, այդ անտանելի ծանր բնույթ:

Մեր ժամանակ ժողովուրդը կոտրում եր կամ հիւծում սովից, Մենք աւերեցինք այնպիսի հացառատ վայրեր, ինչպիսի են Շարուրն ու Անդրին, այնպիսի անասնառատ վայր, ինչպիսի է Աղբարան — աւերեցինք առանց օդուելու հարստութիւններից: 1920 թւականի բերդը — միակ առատ բերդը, որ պիտի ունենայինք սով-տարիներից յետոյ — տւինք (ուրիշ շատ հարստութիւնների հետ մրասին) քեազիմ կարամերի վաշայի բանակին: Իսկ այսօր լսում եմ, թէ Հայաստան կշտացել է, համարեա կարիք չունի հացի: Եւ հաւատում եմ. չէ որ ժողովուրդը ժամանակ ունեցաւ ցանելու եւ կասելու:

Մենք շատ աշխատեցինք, բայց չկարողացանք վերհաստաել քիչ շատ կանոնաւոր հաղորդակցութիւն դրսի աշխարհի հետ, Անդրկովկասեան երկամուղիները փաստորէն փակ մեզ համար բօշեւիկները բացին ճամբանները. Զուլֆայի վրայով այսօր երեւանը հաղորդակցութեան մէջ է պարսկական Ալտրպատականի հետ, բագար վրայով՝ արեւելեան Ռուսաստանի ու Անդրկասպեան երկիրների հետ, բաժնումի վրայով՝ հարաւային Ռուսաստանի ու Եւրոպայի հետ:

Մեր ժամանակ Հայաստան կուրացել էր միմութեան մէջ, արեւը մայր մանելուց կես ժամ յետոյ դադարում եր ամեն շարժում ու աշխատանք, որովհետեւ լուսաւորելու նիւթեր չունենք բօշեւիկները առատ կերպին լուրին բագւից ու աղատեցին երկիրը խաւարի գերիւթիւնից...

Անշուշտ, շատ բան չէ այս ամենը. բայց չէ՞ որ այդ քիչն էլ մնիք չկարողացանք անել:

Քոշեւիկները պէտք եին ու այսօր էլ պէտք են Հայաստանին:

Բայց եւ այնպէս, բօշեւիկնեան սիստեմը՝ իր ամրուց էութեամի՝ անընդունելի է մեզ համար:

Ի՞նչ անել ուրեմն:

Գուցե պայքարել դրսից:

Սա կարող էր ունենալ որոշ արժէք՝ ներսում կատարող բացայաց կամ գաղտնի պայքարին ոյժ տալու համար. իսկ առանց պայքայմանի, ում կամ ինչի է պէտք մեր դրսի վայնասունը:

Այսօր Նկոսպական քաղաքները լեցուն են ամեն դոյնի ոռու և միջրանտներով, մեղ պէս կեանքից դուրս ձգւած մարդկանցով (մօնաքիստներից սկսած մինչեւ սօցիալիստ-յիշափիսականները): Սրանք բաղմաթիւ թերթեր են հրատարակում, գլուքեր են գրում, միտինգներ կազմում, կոչեր անում, բողքում, սպառնում ու հայհոյում. հայհոյում բօշեւիկներին...

Իս չէ գիտեմ մի ուրիշ “գործ”, որ այնքան պարապ ու այնքան ողորմելի լիներ, որքան սրանց արածն է:

Այս բառային որոտ-կայծակներով է արդեօք, որ արտասահմանեան էմիգրանտները պիտի խորտակեն խորհուրդների ոյժը, պայմենցնեն ժողով-կօմերը, չէ-կաների գլուխը կտրեն...

Սա պայքար չէ, այլ անճարակութեան մի խայտառակ ցուցադրութիւն, բօշեւիկի գեմ կուռօղ՝ ներսից պիտի զարնի, որպէս զի հարւածը տեղը համանի. իսկ պատսպարւել սահմանի ետեւը ու արահով հեռաւորութիւնից բռնացք ցցց տալ — սա մի ժեստ է, որ յամենայն դէպս վայել չէ Հ. Յ. Դաշնակցութեան:

Մէր մէջ կան մարդիկ, որոնք կարծում են թէ մնալով քաղաքականապէս հակառակ բանակում, Հ. Յ. Դաշնակցութիւնը դրսից պիտի օժանդակի Հայաստանի տեստեսական վերաշնութեան:

Ի՞նչպէս:

Պիտի կաղմակերպի — համաջակցի կաղմակերպելու — զանազան առեւտրական ու արդիւնաբերական ընկերութիւններ, որ ապրանք

մոցնեն Հայաստան, այնտեղի հում նիւթը վաճառի հանեն արտասահմանեան շուկաները, արհեստանոցներ ու գործարաններ հիմնեն երկրում, հողեր ոռոգեն, գիւղատնտեսական մշակոյթի կատարելագործւած ձեւեր ու մեքենաներ ներմուծեն եւ այլն:

Մի կողմ թողնելով այն ինդիրը, թէ ողբան մնե՞ իրրեւ կուսակցութիւն՝ ձեռնահաս ենք այդ կարգի առեւտրա-արդիւնաբերական կամ խնամատարական - բարեգործական գործունէութեան եւ թէ արդեօք մեր միջամտութիւնը ցանկալի՞ է գործի յաջողութեան տեսակետից, հարց եմ տալիս. կարող է արդեօք մի քաղաքական կուսակցութիւնն ըրագրել իր համար այդպիսի աշխատանք: Կ'ընդունէր, կարծեմ; որ չկ կարող, որ դա իր բանը չէ. ծրագիր ու գործունէութիւն չէ դա քաղաքական կուսացութեան համար, այլ պարզ ինքնաժիտում:

Նթէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, այդ ճամբի վրայ կանգի, այդ ուղղութեամբ գնայ, — նա արդէն յայտարարած կը լինի, որ կորցրել է իր րայսոն ճ'էլե-ը:

Առեւտուրը պէտք է թողնել առեւտրականներին, արդիւնաբերութիւնը՝ արդիւնաբերութիւնին, բարեգործութիւնը՝ բարեգործական հաստատութիւններին: Դաշնակցութիւնը ուրիշ բան պիտի անի, եթէ միայն ունի մի բան անելու:

* * *

Նթէ ունի անելու...

Երկրի ներսը՝ կուսակցութիւն՝ ոչ կարող ենք գործակցել բօշեւիկների պետական աշխատանքին, ոչ էլ օրինական օպօզիցիա կազմել, որքան էլ ցանկանալու մէկը կամ միւսը:

Ստորերկրեայ, դաւադրական գործունէութիւն չը պիտի ունենանք, խորհրդային իշխանութիւնը պայմենացնելու փորձեր չը պիտի ցանկանանք անել, եթէ նոյն իսկ կարողանանք:

Խօսքով պայքարել դրսից ու դաշնութեառում հակարոշեւիկեան սլրօպադանդ անել, երբ ներսից պայմենացնելու մտադրութիւն չընենք եւ երբ դրսի խօսքը չի լսելու երկրում — անիմաստ ու անվայիլ բան է:

Աշխատակցել դրսից Հայաստանի տնտեսական վերաշնութեան, առեւտրական ու արդիւնաբերական ընկերութիւններ կալմէլ — դա քաղաքական կուսակցութեան գործը չէ:

տառիդու մենու վեց ուրսն և մայմուն և կ վիճոյ զջմօտոյ գ մոշկի ծոսու և վլչյու նղյվը յանհուռսի մորոց շնդմտոյ նգմսն իտպր ո՞՛՛

ւղ վեցիութասի շատում կ բարդավայր բռի և ամսն ումը է ծցր վաճառք պատճի ու խօսնե զբութ ող վզուազի մեջանականութասի

լրասնոմնում ու զ մըտիցն
այ կողասսովիզո ովմզգթոստ մէկողզդուն զրվելուսուցի Եշ մօնու
գրեգ զ զ շամեն շահմզ Եղով մասի մշկողուն մի մօնու մզրվելուսի
ուսմի Եղօդու մը ողոկանուուն յլդուտ տռէ մնջուհուն վմկոդի զ Նմուն
վլդուտ տռէ մզրվելուն մօնու ննուչ մմժլդզ մզր մէկոնուի ու մէկոր
նըր յսնընասդ զմու նուստ վմուտ ց—չ մու զ վլդզը որդմզ

ւանողութեան մէկտեղցա՞ն զովը լիս ենթած մէկտեղութեան մէկտեղցա՞ն զովը լիս ենթած

սլորուհ շնղզի տշկածմդի
զվմդզրովը յամդաւչն պեղս և զվմտժուի վլուղիվու զվմնուտովնու
մտքն ու մտիմդ մզր զվմնուի զողմուենս սոտ մզր տն մշղլ ոկ զոչ
ոյտի հինգնդե Նզյ Դ ոչչնմո մէ գտնութի զուփովի զոհորատու մզր
զվմդզրովը յամդաւչն պեղս մսդ մկվուտ Նզտ ու մկվդյանուրենակի
վումի մզր զշնմու հողորուր զու տչտ — բրազոտու մէ զվմնուց ու Դզչ
զոհորմի Եղովը յատգե զվմուսդ իսմու մզումունչմու լուշ մկվուտ զվոստ
ոսսօ զվոհորույզ զնոգ մուկ որ մզովը յատգե լուշ բրազուի մեկտ
տոքրու մէ զվմնակի վմդզրովը յատգու որիք ու բրազով մէ հոմսուտմէ
իսմու մմկնուղեռն վրացյու մզովնեուստո զվովզան ը 8161 մուկ
ոցոստ վմտու եղուումն ոչն եղուու մկվդշու վումի նմու ոչեւուիու

ւասե մի վրև ծմզի գշմօղոկտոսցի ոս ղջմօնհոտով ճ յիսյրանևս կոյ մի գ
ժաղկի ողողոցն զոկումիզո մի Խոշնդոհ ոս վտուն զտկոմթոնտմ հոչ Խոշն
ողոհ զովը յազոկտումուն զսենում ե վր միջլոյզո զվնձզի վր վզաս վիճուտ
հումումո Խոսվ ուրգիլո վզաս ժվլզզո նղոյիլյոսիթոզլուկ մս վոռ

ուղիղը անթիոքոսակ Նորվի Նսմոհ զ՞ գմսն զտիոնելուրսի
Խոկ մը մա ։ Նզտղնու ոյ մոյրտհ զգմսի չ ուղիղը անթիոքոսակ Նոր ։ մոյրտհ
զտիոնելուրսի զ՞ Ազման ։ յրգպվ վտվին մը ցրդման ։ անդզու յրգդան զտու
Դատկինսմ ։ Դարձգ հտստիոհ տէվից Նշնոհ չ մտցին Անդիջրյանունոյ
-ող ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ
-ող ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ ։ Անդիջրյանունոյ

— ՀիմունացՈ Ամգղղորհու մազ
ԶԴ մնչուն ԳԵՐ ԴալպղթնիՄ ուստ քառեկու իշր մծցնեմ Բնի հծու

ւորդին վիշտ? Ավելիդոյ մղովը լաւածիողներ. Վ. Շ.
ավմղցրանթորինքը և վմղցրահիւռնսժ Եղուստ զշմօնմոկի
վշտու շի ոչխոածդի վրու գ մուշի նմս Ենուու Եղջ գ տմղզդղիսնմի յրտ
ովի մս մմնու մղուց տու՞ զմ յդու վտվի մս գ Եղտուու ոչն
ոցգմւս Եղլու Եղու.

հեղի տարրերը, բոլոր վարակւածներին ու տատանսողներին, թօվերին ու յոգնածներին, թերահաւատներին ու յուսահատւածներին, ծովերին ու անտարբերներին — այսինքն՝ իր ներկայ կազմի իննը տասներորդը՝ գուցե եւ աւելին՝ Դուրս պիտի ձգի նաև բոլոր նրանց, որոնք վճռականութիւն չունեն՝ վերջին կարտի վրայ դնել վերջին՝ ունհցածը Տակը պիտի մնայ մի զուած կորիզ՝ հոգով ուժեղ, մտքով անսասան, կուրօրէն հաւատացեալ, ամէն զրհարերութիւնների ընդունակ, ոչնչեց չը վախեցող ու ոչնչի առաջ կանգ չառնող մարդկանց մի խմբակ, ամենախիստ գաղտնապահութեան տակ, Սա չի լինի, իհարկէ, քաղաքական կուսակցութիւն, այլ պարզապես գաւագրական մի կազմակերպութիւն — այնպէս, ինչպէս էր Դաշնակցութիւնը իր գոյութեան նախնական շրջանում:

Այս Ճանապարհով — ու միայն այս Ճանապարհով — թերեւս կարողանար կուսակցութիւնը փրկել իր գոյութեանը, նոր կեանք առնել ու պարզած պահել դրօշակը:

Բայց թնչ գնով:

Յաջողութեան դեպքում՝ հայ քաղաքական դատը ամենալուրջ վլուածքի ենթարկելու եւ հայ ժողովուրդը նորանոր փորձանքների մէջ ձգելու գնով: Եւ սա է, որ պէտք է չը վախեցնի կուսակցութիւնը փրկողներին, այս վտանգն է, որի առաջ չը պիտի կանգնեն յամառողները:

Որպան էլ մենք տարւած լինենք կուսակցական մոայնութիւնով, չեմ կարծում — չեմ կարող ու չեմ ուղում կարծել — թէ մեր մէջը կը գտնէի մէկը, որ զիրուակցօրէն ցանկանար փրկել կուսակցութիւնը այդպիսի գնով:

Կուսակցութիւնը ինքնանպատակ չէ ու այլասեռած է հիմովին, վտանգաւոր է ու վնասակար, եթէ մոռացութեան է տւել այս հիմնական ճշմարտութիւնը: Հայաստան ու հայ ժողովուրդը՝ հում նիւթ չեն Հ. Յ. Դաշնակցութիւնը ապրեցնելու համար: Անդրակելի ոնքի կը լիներ, եթէ մենք մի վայրկեան անգամ թոյլ տայինք մեղ վարել այնպէս, ինչպէս կը վարեկը — գիտակցօրէն թէ անդիտակցօրէն — կուսակցական ֆանատիզմով բռնկւած հիւանդը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը մի սոսկ գործիք էր վարպետ-պատմութեան ձեռին: Երբ գործիքը կատարել է իր գործը, հաշել է ու հնացել կամ երբ գործի շարունակութիւնը պահանջում է նոր ձեռի գործիք — հինը դէն է ձգւում ու պէտք է ձգւի: Անցեալի դործիքը

կարող է մնալ յարդանքի ու երախորագիտութեան, սիրոյ ու պաշտամունքի առարկայի բայց նրա տեղը՝ աղդային թանգարանումն է եւ ոչ սրհեստանցում՝, ուր կուսում է այսօրւայ կեանքը:

Հայ քաղաքական դատը վարելու համար Դաշնակցութիւնը անպէտը է այլեւս, ուրեմն պիտի հեռանայ ասպարելից:

Շարունակ խօսում եմ հայ քաղաքական դատից, շարունակ վերադառնում եմ նոյն խնդրին — այն պարզ պատճառով, որ չեմ կարողանում բաժանել Դաշնակցութիւնը այդ դատից: Իմ ըմբռնումնվ, մեր կուսակցութեան ամրողը էութիւնը այդ դատի մէջ է: Բնական է, ուրեմն, որ ուղղելով խօսք դաշնակցականների համագումարին, չեմ կարող ունենալ ուրիշ ելակետ՝ իմ մոտածողութեան ընթացք տալու եւ եղանակացութիւններս հիմնաւրելու համար:

Հարցում եմ. մեղ հետ միասին կը մեռնի արդեգք մեր կեանքի գուծը՝ հայ քաղաքական աղատագրաւումը:

Ծայրայեղ մծամոռութիւն կը լիներ այսպէս մոտածել, — ոչ միայն մծամոռութեան, այլ եւ շատ միամիտ հասկացողութիւն պատմական երեւոյթների:

Մրանից մի տարի առաջ ես զրել եմ “Ճակատամարտի” մէջ, թէ Հ. Յ. Դաշնակցութեան մահով մծամոռէս վտանգւած կը լինի նաև հայ քաղաքական դատը. բայց այնտեղ մրամատանակ բացատրել եմ, որ Դաշնակցութեան խսկական սահմանները շատ աւելի լայն են, քան մեր կուսակցական կազմակերպութիւնը. որ մեր կուսակցութիւնը՝ մարտնչող հայութեան արտայայտութիւններից մէկն է միայն, ոչ աւելին. որ “Դաշնակցութիւն” անունն իսկ կարող է վերանալ, մոռացելի սպառ, բայց այն լրացուստ ոգին, աղատադրւութ այն տիեզը, որ ծնունդ է տւել դաշնակցութեան եւ որ իսկական Դաշնակցութիւնն է, չեն մեռնի կուսակցութիւնը — աւելի ճիշտ՝ այսօրւայ կազմակերպութիւնը — կարող է կազմակերպութել, բայց գաղափարն ու գործը կը մնան կենդանի:

Այս միայն կենդանի կը մնան, այլ եւ մի նոր կենսունակութիւն կը ստանան:

Եւ հենց դրա համար է, — դատը ապահովելու, նրա դարձացման ընթացքը չը խանգարելու համար է, որ առաջարկում եմ կուսակցական ինքնասպանութիւն:

Հասկանակք. Հայ բօլշեւիկները մեր ժառանգներն են, որ շարունակելու են — ու արդեն շարունակում են — մեր գործը։ Նրանք անում են ու անելու են այդ՝ գիտակցեն թէ չը գիտակցեն, ցանկանան թէ չը ցանկանան ինչպէս եւ մենք, նրանք էլ ժամանակաւոր մի դործիք են Մեծ վարպետի՝ պատմութեան ձեռին։ Մենք մերը արինք, լրացրիկ մի որոշ շրջան։ Շարունակութիւնը նրանց է պատկանում։

Նրախոտապարտ պիտի լինենք բօլշեւիկներին։ Խորտակելով մեղ, նրանք՝ եթէ շասեմ փրկեցին, գէթ աւելի ապահով վիճակի մէջ դրին մեր կեանքի գործը։ Նրանք եկան մեղ փոխարինելու ճիշտ այն օրհասական ժամին, երբ մենք ինքննրա այլ եւս չենք կարող տանել մեր գործի ծանրութիւնը։

Գործը չի մեռած։

Ճիշտ է, որ Հայաստան անկախ պետութիւն չէ այսօր, այլ մի ինքնավար նահանգ լուսական կանոնադրութեացիայի մէջ։ Բայց թերեւս առ Հաւագոյն է այսօրւայ համար։

Փորձը ցոյց տևեց, որ՝ այժմ եւ եթ՝ անկախ պետութիւն կազմելը — մանաւանդ քաղաքական այս աննպաստ պայմանների մէջ — Հայ ժողովուրդի ոյժերից վեր բան է։ Պէտք է մի մըջն զրութիւն, քաղաքական մի նախակրթարան — դաստիարակելու, պետական կեանքին վարժեկը համար. ապա՝ մեծ ցնցումներից, կոսորածներից ու աւերաներից յետոյ պետք է հանդսութիւն՝ ոյժեր հաւաքելու ու կաղմակերպելու համար։ Իրերի լերմամբ, այդ շրջանը Հայստան պիտի անցնի բօլշեւիկեան դրօշակի տակ։ Թողջ այդպէս լինի։

Արդ՝ օդնել բօլշեւիկներին Դաշնակցութիւնը չի կարող, մնում է որ չեն խանդար — այդ կը լինի նրա օփութիւնը։ Խսկ չը խանդարելու։ Համար ունի միջն միայն։ Հեռանալ ասսպարիզեց։

Յաճակու լսում եմ, թէ մեր դասաւ ապահովելու համար չի կարելի յենել միայն մի օրիենտացիայի վրայ. զգուշութիւնը պահանջում է, մէկի կողքին ու զուգընմաց՝ իրեւս պահեստի ոյժ՝ գոյութիւն ունենայ նաևս մի ուրիշը։ Հայ բօլշեւիկները տառում են ուստական զիծը — թողջ տանին, այնտեղ մենք բան չըւնենք անելու։ Բայց պետք է նախատեսնել եւ ուրիշ կարելութիւններ։ Օրինակ, ուստ բօլշեւիկները այսօր կաղմում են թուքերի հետ մի ընդհանուր Ֆակատ։ Բայց վաղը

այդ արհեստական բլօկը կարող է քանդւել ու մենք կարող ենք հարկադրւած լինել մի ընդհանուր լեզու որոնելու՝ թուքերի ու նրանց ետեւը կանգնած նըրոպացիների հետ խօսելու համար։ Հարկաւոր է, ուրեմն, կապեր պահել վաղւան թուքերի հետ։ Եւ եթէ դաշնակցութիւնը ուրիշ բան չըւնի անելու, հենց այս մէկ գործի համար պետք է պահի իր գոյութիւնն ու այժմեան հակաբօլեցիկեան դիբբը։

Խօսքս չերկարացնելու համար չեմ ուզում առարկել ոչ այդ կարելութեան եւ ոչ էլ երկրորդ օրիենտացիայի կարեւորութեան դէմ։ Ասում եմ միայն ու պնդում — եւ սա է էականը — որ Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ, որ պիտի կատարի այդ գերը։ Թուքերի հետ խօսելու համար Դաշնակցութիւնը ամենից աւելի անընդունելի բանախօսն է — աւելի անընդունելի, քան բօլշեւիկների հետ խօսելու համար։

Իթէ մի օր Հարկ եղաւ անուշի կապել թուքերի հետ, հանդես պիտի դան ուրիշ մարդիկ, ուրիշ հասկացողութիւններով, ուրիշ հոգեբանութիւնով, ու մանաւանդ ուրիշ անցեալով (կամ առանց անցեալի)։ Այստեղ եւս Դաշնակցութիւնը կարող է խանգարել միայն, բայց ոչ օգնել։

Կոյն առարկութիւնը արւում է եւ մի ուրիշ ձեւով։

Չէ որ — ասու՞մ են — բօլշեւիկեան բնիժին ու տիրապետութիւնը յաւիտենական չեն։ Բօլշեւիզմը կարող է տապալւել — աւելի կամ պակաս հետու ապագա պատմ, աւելի կամ պակաս անակնկալօրեն որեաք է ունենալ մի պահեստի ոյժ, մի կաղմանկերպութիւն, որ սնուցաղէս փոխարինի բօլշեւիկներին, իր ձեռն առնի զեկը, չը թողնի երկիրը անիշխանական վիճակի մէջ։

Դաշնակցութիւնը պիտի պահի իր կաղմը թեկուղ միայն այդ օրւայ համար։

Դարձեալ չեմ ուզում վիճել։ այդպիսի զրութիւն կարող է ստեղծել, բայց ասում եմ ու պնդում։ Դաշնակցութիւնը չէ, որ պիտի կազմի նոր իշխանութիւնը։

Երբ ներկայ քաղաքական պայմանները փոխւին հիմնովին կամ խոշըր շափերով, հաւանական է, որ խորհրդադրին իշխանութիւնը՝ իրեւս անհարավատ ու անհամապատասխան հայկական իրականութեան՝ Հարկադրւած լինի տալ իր տեղը ուրիշ ոյժերի, ուրիշ քաղաքական ու հասարակական խմբակցութիւնների։ Նա եւս կատարած ու աւարտած կը լինի իր գերը։ Բայց Դաշնակցութիւնը չէ, որ պիտի փոխարինի բօլշեւիկներին։

Նոր դրութիւնը նոր պահանջներ կ'առաջադրի:

Քաղաքական (ու մանաւանդ յեղափոխական) կուսակցութիւնները չեն կարող կերպարանափոխել անվերջ, ամեն օրւայ պահանջի համեմատ Նրանք ծագում են որոշ շրջաններում՝ որոշ դործ որոշ միջոցներով կատարելու համար. երբ դրութիւնը փոխուում է հիմնովն, պետք է փոխին եւ քաղաքական խմբութիւնը չէ կարող աղատել իր անցեալից, որբան էլ կամենայ. անցեալը միշտ անդրադառնալու է ներկայի վրայ, կաշկանդելու է այն կան յիշողութիւններ, սովորութիւններ, կապեր, համակրութիւններ ու հակակրութիւններ, որոնք — նոյն իսկ ակամայից ու անգիտակցօրէն — յոյտ են գալու ու մի տեսակ անաբրունիցմ մոցնելու առօրեայ աշխատանքների մէջ:

Նոր գինին չի կարելի լիցնել հին տիկերի մէջ. գիտէք որ տիկերն էլ կը պատուեն, գինին էլ կը թափւի:

Անցեալում Հ. Յ. Դաշնակցութիւնը պետք էր Հայաստանին ու Հայ ժողովուրդին. ապագայում նա պետք չի լինելու այլեւս Ուրիշ դաշնակցութիւն պիտի փոխարինի նրան. — Թերեւս Հայ պետական դաշնակցութիւնն:

Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չըւնի այլեւս, ոչ ներկայում, ոչ ապագայում. Նա վերջ պիտի դնի իր գոյութեան:

Պիտի անի այդ՝ նոյն իսկ իր սեփական անցեալը, իր անուն ու պատիւը փրկելու համար:

Նայենք մեր շուրջը. միթէ մենք ապրում ենք այսօր, միթէ ունենք կուսակցական կեանք ու աշխատանք: Միթէ չենք տեսնում, որ քայլայման պիօցեսի մէջ ենք արդէն եւ որ քայլայման պատճառները՝ արտաքին ու պատահական չեն, այլ ներքին են, օրգանական...

Երիտասարդութիւնը, նոր սերունդը մեղ հետ չէ այլեւս, ինչպէս էր 20—25 տարի առաջ թարմ, ոգեւորութիւնով ու հաւատով լի ոյժեր չեն գալիս շատացնելու մեր շարքերը, փոխարինելու յոգնածներին, ինքնավտահութիւնն ու հաւատը կորցրածներին: Ընդհակառակը՝ փափում են մզսնից, լքում են կուսակցութիւնը կամ — որ շնորհի վատ է — մնում են միայն անւանօրէն, իներտ, անտարձեր, աշխայժից ու ոգեւորութիւնից զուրկ, աշխատանքի անընդունակ: մահւանցուրտը սրտերի մէջ ու հեգնական ժամանքների վրայ:

Ո՞հաք չենք ուղում տեսնել իրականութիւնը եւ սովորութիւն ենք արել մի շարլոն բացատրութիւն տալու երեւոյթին — ասում ենք. վատովն են, շահախնդիրները, վարձկաններն ու վախկոտները, որ լրում են մեզ. իսկ լաւերը, անկեղծները, անշուհախնդիրները, գաղափարականներն ու զիտակիցները, հոգով ու մտքով առողջները՝ մնում են մեղ հետ, ինչպէս եւ եղել են միշտ... միթէ բացատրութիւն է սա, միթէ այս որակում նոյնը չէ, ինչ եւ բոլշևիկների յիմար խօսքը, թէ՝ բուրժուազիականներն են, աւազակները, թալանիչները ու ամէն կարգի բաղդախնդիրները, որ կաղմում են այսօր Դաշնակցութիւնը:

Սա բացատրութիւն չէ, միտիր երեխաների կամ անզուսպ խուժանավանների խօսք է սա:

Մեր կուսակցութիւնը քայլայում է, որովհետեւ կորցրել է իր տակ մ'էլեքը: Ահա դառն ծշմարտութիւնը: Քաջութիւնը պիտի ունենանք խոստովանելու այդ ծշմարտութիւնը եւ հարկաւոր եղբակացութիւնն անելու:

Իսկ մրակ կարելի եղբակացութիւնն այն է, որ պետք է վերջ դնենք մեր կեանքին:

* * *

Գիտեմ, որ ներկայ կօնֆերանը իրաւասու չէ այդպիսի մի վճիռ հանելու. բայց նո իրաւասու է՝ հարցին ընթացք տալու ու լրացման միջոցներ հոգալու:

Այս նպատակով առաջարկում եմ Խորհրդաժողովին.

Ընկերութեան բարեւներով՝

ՅՈՒ. ԳԱԶԱԶՆՈՒԽԻ

ԲՈՒՐԺՐԵՍ, Մարտ 1923 թ.

1 Հետեւում են զուակուսակցական բնոյթի առաջարկներ, որոնց հրապարակ հանելու իրաւունքը ինձ չէ պահանում:

Յ. Ք.